

ՆԱԽԱԳԱՅ ԱՍԱՏ ԵՒ ՀՈՒՆԿՕ ԽՈՐՀՐԴԱԿՅԵՃԱՆ ՏԱՐԱԾՆԵՐՁՆԻ ԻՐԱՎԻՃԱԿԻՆ ՀՈՒՐՑ

Երկուշաբթի, 23 Մարտ 2020-ին, Սուրիոյ Նախագահ Պաշար ալ Ասատ ընդունեց Ռուսիոյ պաշտպանութեան Նախարար Սերկեյ Շուէլթս եւ անոր ընկերակցող պատուիրակու-



թիւնը: Կողմերը խորհրդակցեցան 5 Մարտ 2020-ին ռուս-թրքական համաձայնութեան եւ գինեալ ահաբեկչական խմբաւորումներուն նշեալ համաձայնութեան մշտական խախտման շուրջ, ապա Նաեւ Դալէպ-Լաթաքիա M-4 կոչուող մայր ճամբայէն ահաբեկիչներու հեռացման համաձայնութիւնը կեանքի կոչելու մասին:

Կողմերը խորհրդակցեցան նաեւ սուրիական ճեգիրէի տարածքի իրավիճակին, ԱՄՆ-ի սուրիական քարիւղ թալանելուն, ինչպէս նաեւ սուրիական տարբեր շրջաններու մէջ ապահովութեան վերականգնումին համար կառավարութեան որդեգրած միջոցներուն շուրջ: Նախագահ Ասատ բարձր գնահատեց Ռուսիոյ զօրակցութիւնը Սուրիոյ, յայտնելով որ Ռուսիա ջանք չի խնայեր Սուրիոյ պարտադրուած պատժամիջոցները վերացնելու եւ Սուրիոյ ժողովուրդին օգնութեան ձեռք երկարելու համար:

ՍՈՒՐԻՈՅ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾՈՅ ՆԱԽԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԿՐԵՆ ՆԵՐՍ ՍԱՆՏԱԿԻ ՊԱՐԷՏԱՅԻՆ ԺԱՄ ՅԱՅՏԱՐԱՐԵՅ



Պակասեց ժաիրի դիմակայման համար կառավարութեան կողմէ ձեռնարկուած Նախագոյնական քայլերու շրջագիծէն ներս, ինչպէս նաեւ հանրային առողջութեան եւ քաղաքացիներուն ապահովութեան մեկնակէտէն ելլելով, Սուրիոյ Ներքին Գործոց Նախարարութիւնը Սուրիական Արաբական Դաշնակցութեան ողջ տարածքին մասնակի պարտադրուած ժամ կը սահմանէ երեկոյեան ժամը 6:00-էն մինչեւ առաւօտեան ժամը 6:00, Գործըշաբթի, 25 Մարտ 2020-էն սկսեալ՝ ցերեպ տնօրինում:

Ներքին Գործոց Նախարարութիւնը կոչ կ'ուղղէ քաղաքացիներուն ինքնակամ յարգելու պարտադրուած ժամուն դրութիւնը: Պարտադրուած ժամը խախտողները օրինական պատասխանատուութեան պիտի ենթարկուին:

Սուրիոյ Ներքին Գործոց Նախարարութիւն

ՀՀ ՍԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ԱՌԱՔԵՆՈՒԹԻՒՆԸ ՍՏԵՂՈՒՄԸ ՆՈՐ ԻՐԱՎԻՃԱԿԻՆ ՄԷՋ

Դալէպի Դաշնաստանի Դաշնակցութեան գլխաւոր հիւպատոսութեան եւ Սուրիահայ Օգնութեան Խաչի հետ գործակցութեամբ 20 Մարտին ԴԴ Մարդասիրական առաքելութիւն իրականացնող խումբը Դալէպի Դաշնակցութեան, Դարմանատուն ընկերաբժշկական կեդրոնին եւ շարք մը այլ բժշկական հաստատութիւններուն փոխանցած է բժշկական պիտոյքներ:



Դալէպի գինուորական հիւանդանոցի պետ, սպայ Ֆայեզ ալ Ալուպի բարձր գնահատած է հայ եւ սուրիացի բժիշկներուն միատեղ ջանքերը, նուիրական աշխատանքը, մասնագիտական բարձր յատկանիշները, ոչ միայն պատերազմի պատճառով տուժածներուն բուժօգնութիւն ցուցաբերելու, այլեւ միատեղ ուժերով որեւէ վտանգի դէմ պայքարելու պատրաստակամութեան համար:

Դալէպի մէջ մարդասիրական առաքելութիւն իրականացնող ականազերծողներն ու բժշկական խումբերը բնականոն ընթացքով կը շարունակեն իրենց աշխատանքը: Միեւնոյն ատեն, պակասեց ժաիրի վարակին տարածումը կանխելու եւ կարելի եղածին չափ նուազեցնելու համար կ'իրականացուին մեծածաւալ հակահամաճարակային նախաձեռնութիւններ, յատկապէս ցլորախառն լուծոյթով եւ տարբեր ախտահանիչ հեղուկներով շրջակայ միջավայրի, ախտահանիչ գործողութիւններ կը կատարուին:



ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԹԻ -1-

ԱՌՈՂՋԱՊԱՅԱԿԱՆ ՅԱՆՃՆԱԽՈՒՄԲ՝ ՊՍԱԿԱՉԵՒ ԺԱՐԵՆ ՆԱԽԱՉՈՒՅՄԱՆ ՆՊԱՏԵՆՈՒ ՀԱՄԱՐ

Պակասեց ժաիրի տարածման կանխարգիլման միջոցներ որդեգրելու համար, Բերիոյ Դալէպի Ազգ. Առաջնորդարանի Ներկայացուցչական կազմը, խորհրդակցել էտք Դալէպի Առողջապահութեան Տնօրէնութեան հետ, յառաջացուց բժիշկներէ, դեղագործներէ եւ բժշկական տարբեր հաստատութիւններու ներկայացուցիչներէ բաղկացած Առողջապահական Յանձնախումբ մը:

Յանձնախումբը իր խորհրդակցական առաջին նիստը գումարեց Երկուշաբթի, 23 Մարտ 2020-ի երեկոյեան, Ազգ. Առաջնորդարանի դահլիճէն ներս, Նախագահութեամբ Բերիոյ Դալէպի Բարեջան Առաջնորդ Գերշ. Տէր Մասիս Սրբ. Եպս. Զօպուեանի:

Յետ խորհրդակցութեան եւ յառաջիկայ գարգացումներէն կանխագոյնացման նախապատրաստութեան, որոշուեցաւ որ ՍՕԽ-ի Առողջա-



պահական կեդրոնը ի սպաս դնել մեր ժողովուրդի գաւակներուն ծառայութեան:

Առ այդ կը տեղեկացնենք, որ՝

- 1.- Կեդրոնը բաց պիտի մնայ առաւօտեան ժամը 9:00-էն երեկոյեան ժամը 6:00:
- 2.- Կեդրոնը պիտի ընդունի առողջապահական անմիջական եւ անյետաձգելի պարագաներ՝ տուեալ ժամանակամիջոցին:
- 3.- Խուսափելու համար անտեղի շրջագայութենէ եւ վարակումի առիթ տուող խճողումներէ, ընթացիկ առողջապահական հարցեր ունեցող պարագաները կրնան հեռաձայնային կապով խորհրդատուութիւն ստանալ կամ ժամադրութիւն ապահովել՝ հեռաձայնելով Առողջապահական կեդրոնի հետեւեալ թիւին. 021 464 4 947

Մեր ժողովուրդի գաւակներուն ուշադրութեան կը յանձնենք նաեւ, որ Դալէպի Առողջապահութեան Տնօրէնութիւնը հետեւեալ թիւերը տրամադրած է 24 ժամուան ծառայութեան եւ խորհրդատուութեան համար: Ծատ կարելոր պարագաներու կարելի է հեռաձայնել նաեւ ստորեւ յիշուած թիւերուն.

- 021 221 2114
- 0944 361 336
- 0933 319 465
- 0944 424 443
- 0933 448 515

*Առողջապահական Յանձնախումբ
 Դալէպ, 24 Մարտ 2020*

Խմբագրական

ՆԱԽԱԶԳՈՒՇՈՒԹԻՒՆԸ ԲՈՒԺՄԱՆ ԱՌԱՋԻՆ ՔԱՅԼՆ Է

Պսակաձեւ ժահրէն պաշտպանուելու նախագգուշական աշխատանքը նոյնքան կարեւոր է որքան բուժումը:

Նախագգուշութիւնը կարեւոր է, որովհետեւ համաճարակը կը տարածուի այնպիսի պայմաններու մէջ, երբ որոշ պետութիւններ տակաւին մարդկային իրենց առաքելութիւնը կը շրջանցեն, պատճառ դառնալով վարակի տարածման վտանգին աճման: Ներկայ պայմաններուն մէջ այս համաճարակը յաղթահարելու համար անհրաժեշտ է պետութիւններու միջեւ գործակցութիւնը, քաղաքական նկատառումներու եւ մրցակցութեանց շրջանցումով, որովհետեւ այս ժահրը կը սպառնայ ողջ մարդկութեան:

Որքան տհաճ է տեսնել, որ թրքական ուժեր Յասիջէի ժողովուրդին ջուր մատակարարող ջրամուղ խողովակները կը փակեն այսպիսի պայմաններու մէջ ու Ռուսիոյ միջնորդութեամբ կը ստիպուին վերաբանալ զանոնք: Սա ոչ թէ քաղաքական հաշուարկ է, այլ ներկայ պայմաններու յաղթահարման մարտահրաւերը չընկալելու անգրագիտութեան դրսեւորում: Նոյնն է պարագան արեւմտեան այն երկիրներուն, որոնք տակաւին շրջափակման մէջ կը պահեն Իրանն ու Սուրիան, պատճառ դառնալով համաճարակի տարածման. տարածում մը, որ ոչ սահման, եւ ոչ ալ ազգութիւն կը ճանչնայ:

Սուրիոյ մեր ժողովուրդը անհրաժեշտ է որ գինուի նախագգուշացման բոլոր գիտելիքներով, իմանայ թէ ինչպիսի՛ նախագգուշական քայլերու պէտք է դիմէ գերծ մնալու ժահրէն: Այստեղ կարեւորութեամբ կը յիշեցնենք նաեւ, որ պետութեան սահմանած բոլոր օրէնքներուն ճշգրտութեամբ, առանց անտեսումի հետեւիլը էական է՝ թէ՛ մենք զմեզ, թէ՛ մեր ընտանիքները, եւ թէ շրջապատը ինչպէ՛ս համար: Կացութեան լրջութիւնը ըմբռնելով պէտք է գործակցութեան ոգի ցուցաբերել:

Սուրիահայ Յամայնքի բարեսիրական միութիւններն ու Բերիոյ Յայոց Թեմի Ազգ. Առաջնորդարանին յառաջացուցած Առողջապահական Յանձնախումբը պատրաստ են ծառայելու մեր ժողովուրդի գաւակներուն, անհրաժեշտ առողջապահական կեդրոններ ուղղելու վարակուողները եւ ամէն ջանք ի գործ դնելու՝ նուազագոյն վնասներով ձերբազատելու այս համաճարակէն:

Սուրիոյ Կրթութեան Նախարարութիւնը եւս անհրաժեշտ այլընտրանքները սահմանած է արդէն ուսումնական տարին իր լրումին հասցնելու համար: Կրթութեան նախարարը յառաջիկայ օրերուն հանդէս պիտի գայ մամլոյ ասուլիսով, պարզաբանելու որդեգրուած քայլերը:

Միւս կողմէ, Յալէպի Արամ Մանուկեան ժողովրդային տան եւ Նոր Գիւղի «Տիգրանեան» կեդրոնի մեր հայ տղաքը, նախագգուշական բոլոր միջոցները յարգելով, կը շարունակեն հսկել հայկական թաղամասերն ու ազգային կեդրոնները, օժանդակել յատկապէս երեք ու ֆիզիքապէս անկարող մեր հայորդիներուն, ապահովել անոնց հանապազօրեայ հացն անգամ եւ տիրութիւն ընել մեր ժողովուրդին:

Ուստի, բոլորիս հաւաքական ճիգերով ջանանք շրջանցել այս ծանր կացութիւնը եւ տուն մնալու կոչին անսալ, թելադրելով բոլորին տուն մնալ պետութեան սահմանած ժամանակահատուածին ու գէթ մեր բաժինը բերել վտանգի համեմատութեան նուազեցման ճիգերուն:

Տո՛ւն մնացէք:

«Գ.»

-Զորքշաքթի, 25 Մարտ 2020-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Սուրիոյ մէջ պսակաձեւ ժահրով վարակուող 4 պարագաներ եւս արձանագրուած են:

Արդիւրը յայտնեց, որ անոնք նախորդ շաքթուրնէ արդէն կը գտնուէին Դամասկոսի Տուէր արուարձանի մեկուսացման կեդրոնը որպէս կասկածեալ պարագաներ, եւ հաստատեց որ անոնք որեւէ անձի հետ շփում չեն ունեցած:

Այսպիսով Սուրիոյ մէջ պսակաձեւ ժահրով վարակուողներուն թիւը կը հասնի 5-ի:



-Զորքշաքթի, 25 Մարտ 2020-ին, ՍԱՆԱ հաղորդեց, որ Յասիջէ նահանգի ջուրի ընկերութենէն խմբակ մը մուտք գործեց Յասիջէ ջուր մատակարարող Ռաս ուլ Այնի «Ալ-Լուք» կայան եւ սկսաւ նահանգի ջրամուղ խողովակները բանեցնել, երեք օր թրքական բանակին կողմէ ջուրի մատակարարման կասեցումէն ետք:

Այս առիթով Յասիջէի Զաղաքային Խորհուրդի նախագահ Ատնան խաճօ ՍԱՆԱ-ին յայտնեց, որ խորհուրդը 200-300 մէթր խորանարդ ջուրով բեռնաւորուած փոխադրակառքեր պիտի ուղղէ Յասիջէ՝ ժողովուրդին կարիքը բաւարարելու համար:



- Սուրիոյ տեղեկատուութեան նախարար Իմատ Սարա 23 Մարտին նախարարութեան յարկէն ներս ժողով մը գումարեց սուրիական «Ուաթան», «Թշրին» եւ «Սաուրա» թերթերու խմբագիրներուն ներկայութեան՝ արծարծելու տպագիր թերթերու հրատարակման ու ցրուումի կարելիութիւնները: Կողմերը խորհրդակցելէ ետք հաստատեցին, որ գիտականօրէն փաստուած է, թէ թուրքի ճամբով պսակաձեւ ժահրը կրնայ արագօրէն փոխանցուիլ, հետեւաբար նախարարութիւնը որոշեց սուրիական տպածոյ թերթերու հրատարակումը եւ ցրուումը դադարեցնել եւ թելադրել, որ խմբագրութիւնները բաւարարուին միայն իւրաքանչիւր թերթի համացանցային տարբերակով՝ ցնոր տնօրինում:



- Սուրիոյ կառավարութիւնը քաղաքացիները յորդորեց հետեւիլ պսակաձեւ ժահրէն նախագգուշանալու Առողջապահութեան Նախարարութեան թելադրանքներուն, հակաէնտրոնի դեղերու օգտագործումով եւ անհատական մաքրութեան ուշադրութիւն դարձնելով, գերծ մնալու պսակաձեւ ժահրէն:

Կառավարութիւնը քաղաքացիները տուն պահելու համար որոշեց Երկուշաքթի, 23 Մարտ 2020-ի երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ դադարեցնել հանրային եւ անձնական փոխադրամիջոցներու օգտագործումը Սուրիոյ նահանգներուն մէջ, իսկ Երեքշաքթի, 24 Մարտ 2020-ի երեկոյեան ժամը 8:00-էն սկսեալ՝ նահանգներուն միջեւ, նախարարութիւններուն եւ այլ կարգ մը հաստատութիւններուն թելադրելով սեփական միջոցներով փոխադրել սակաւաթիւ պաշտօնեութիւնը միայն:



-ՄԱԿ-ի անդամ ութը երկիրներու մնայուն ներկայացուցիչներ, ներառեալ Սուրիոյ ներկայացուցիչ դոկտ. Պաշար ալ Ճաաֆարի, պահանջեցին վերացնել իրենց երկիրներուն պարտադրուած պատժական տնօրինումները՝ դեմ դնելու պսակաձեւ ժահրի համաճարակին:

Անոնք միացեալ նամակ մը ուղղեցին ՄԱԿ-ի գլխաւոր քարտուղար Ալթոնիօ Կոթերեսին՝ վերջ տալու այս ապօրինի պատիժներուն եւ համահաւասար չափանիշներով ու գործակցութեամբ շարունակելու պսակաձեւ ժահրի տարածման դեմ համաշխարհային պայքարը:



Լուրեր Հայաշխարհին

ԱՍՈՒԽԻՄ՝ ՀՅԴ-Ի ԿՈՂՄԷ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ ԱՌԱՋԱՐԿՆԵՐՈՒ ՓԱԹԵԹԻՆ ՄԱՍԻՆ

Երեքշաբթի, 24 Մարտին տեղի ունեցավ ՀՀ-ի Հայաստանի Գերագույն Մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթելեանի, Գերագույն



Մարմինի անդամներ Արթուր Խաչատրեանի եւ Արծուիկ Մինասեանի մամուլյ առուկիսը: ՀՀ-ի ներկայացուցիչները խօսեցան ՀՀ Դաշնակցության կողմէ Հայաստանի կառավարության ներկայացուցած՝ արտակարգ դրության պայմաններում մեջ իրականացման ենթակայ միջոցառումներու վերաբերեալ առաջարկներու փաթեթին մասին:

ՀՀ-ի Հայաստանի Գերագույն Մարմինը կազմած է քաղաքական եւ մասնագիտական ծաւալուն փաստաթուղթ մը, երկրին մէջ հաստատուած արտակարգ իրադրութեան վիճակէն բխող քայլերու մասին, նշեց ՀՀ-ի Գերագույն Մարմինի ներկայացուցիչ Իշխան Սաղաթելեանը:

Ան յիշեցուց, որ ՀՀ-ի Գերագույն Մարմինը տակաւին 14 Մարտին իր մասնագիտական յանձնախումբերուն կողմէ ներկայացուցած է մասնագիտական գնահատական, գործողութիւններու ծրագիր. անկէ ետք ՀՀ-ն յայտարարութեամբ իր պատրաստակամութիւնը յայտնած է իր ամբողջ ուժը եւ կարողականութիւնը ղնելու ստեղծուած իրավիճակին մէջ երկրի առջեւ կանգնած մարտահրաւերները յաղթահարելու համար: Նմանատիպ յայտարարութեամբ հանդէս եկած է նաեւ ՀՀ-ի Բիւրօն:

Իրավիճակի վերլուծութիւնը ցոյց կու տայ, որ համավարակին դէմ կրնանք պայքարիլ միայն կառավարչական հմտութիւններու գործադրութեամբ, իրական ժամանակահատուածի մէջ բազմաթիւ, այդ կարգին նաեւ ցաւոտ որոշումներու կայացումով, նշեց ՀՀ-ի Գերագույն Մարմինի անդամ Արթուր Խաչատրեան:

Ըստ անոր, կ'ապրինք ծանր պայմաններու մէջ եւ որոշումները պէտք չէ ըլլան ամբոխահանոյ:

Խաչատրեան նկատել տուաւ, որ տակաւին չեն կրնար ըսել, թէ որքան պիտի տեսնուին համավարակը, ինչ հետեւանքներ պիտի ունենայ Հայաստանի եւ համաշխարհային տնտեսութեան վրայ, հետեւաբար, պատրաստ լուծումներ առաջարկելը ժամանակավրէպ է: «Կառավարութիւնը պէտք է քայլերու ձեռնարկէ, նուազագոյնի հասցնելու քաղաքացիներու եւ փոքր տնտեսավարողներու ուսերուն դրուած ծանրութիւնը եւ հաւանական կորուստները», ըսաւ Արթուր Խաչատրեան:

Այս փաստաթուղթը իր մէջ կ'ընդգրկէ շուրջ 50 նախաձեռնութիւն: Այս իրավիճակին մէջ մեզի համար կարեւոր է բնակչութեան առողջութեան պահպանումը: Այս ծիրին մէջ գոյատեւումը կը դառնայ առաջին կարեւորութեան գործողութիւն, որուն ուղղութեամբ իշխանութիւնները պարտաւոր են քայլերու ձեռնարկելու, եւ ոչ թէ մտածելու այն սովորական իրավիճակի նման, թէ անհրաժեշտ է տարբեր ուղղութիւններով, ինչ որ գարգացումներ ապահովել: Ատիկա կեղծ կը թուի, նշեց Արծուիկ Մինասեանը:

Ըստ Մինասեանի, եթէ բնակչութեան վտանգ կը սպառնայ, կը նշանակէ նախ եւ առաջ իշխանութիւնը պարտաւոր է այդ վտանգը կանխարգիլելու եւ երաշխաւորելու քաղաքացիներուն գոյութիւնը:

Կիրո Մանոյեան. «Արձանիկ Տրամպի Օժանդակութեան վերաճումը ՊիՏԻ ԽՍՆՏԷ ՌԻՏԵՐՈՒ ՀԱՆՄԱՐԱԿՈՒԹԻՒՆ»



ՀՀ-ի Բիւրոյի անդամ, ՀՀ-ի Հայ Դատի եւ քաղաքական հարցերու գրասենեակի ղեկավար Կիրո Մանոյեան «168 ժամ»-ին հետ ունեցած գրոյցին ընթացքին անդրադարձաւ Միացեալ Նահանգներու այս տարի Արցախին օգնութիւն չտրամադրելու որոշումին եւ անոր դրդապատ-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՋ ՊՍԱԿԱՅԵՒ ԺԱՆՐԻ ՎԱՐԱԿԱՆ 16 ՆՈՐ ՊԱՐԱԿԱՅ ԳՐԱՆՑՈՒՄ Է. ՀԱՍՏԱՏՈՒՄ ԴԷՊԵՐՈՒՆ ԹԻՒԸ ՀԱՍՄ 265-Ի. ԲՈՒԺՈՒԴՆԵՐՈՒՆԸ՝ 16-Ի

«Երկիր».- ՀՀ Առողջապահութեան Նախարարութիւնը Հայաստանի մէջ 25 Մարտին պատկաճեւ ժաիրով վարակումի 16 նոր դէպք գրանցած է:

24 Մարտին հաղորդուած տուեալներուն համաձայն, գրանցուած էր պատկաճեւ ժաիրի 249 պարագայ: Ընդհանուր առմամբ՝ 25 Մարտին հաստատուած է 265 պարագայ:

Բացասական արդիւնք արձանագրուած է 1315 պարագաներու քննութեան արդիւնքով եւ 16 անձ բուժուած է:



Յիշեցնենք, որ 24 Մարտին Հայաստանի մէջ պատկաճեւ ժաիրով վարակուած 14 քաղաքացի բուժուած է, 88-ն դուրս եկած է մեկուսացումէն: Վարակակիրներուն մէջ 65-էն աւելի մեծ տարիքով 11 հոգի կայ, 70-էն վեր՝ 5 հոգի: Թոքաբորբով հիւանդներու ընդհանուր թիւն է՝ 30: Անոնցմէ 5-ը կը գտնուին բուժման տակ: Երեքշաբթի օրուան դրութեամբ, Հայաստանի մէջ կայ 868 մեկուսացուած քաղաքացի, 2419 քաղաքացի ինքնամեկուսացման ենթարկուած է:

ճաններուն: Ան դիտել տուաւ, որ արդէն 2 տարիէ ի վեր նախագահ Ռոմանիի վարչակարգը կ'աշխատի, որ այդ պետութեան պիտոճէին մէջ Արցախին յատկացուելիք օգնութեան մասին որեւէ տող չըլլայ, ինչ որ չյաջողեցաւ: Սակայն, այս տարի չեղեալ նկատուեցաւ ակաճաճեւ ծանր նպատակով Արցախին յատկացուող մարդասիրական օգնութիւնը: «Արդիւնքը այն է, որ Միացեալ Նահանգներու գործադիր մարմինը չ'ուզէր, բայց օրէնսդիր մարմինը կ'ուզէր օժանդակութիւն տրամադրել, ուստի տեսականօրէն կարելիութիւն կայ շարունակելու

աշխատանքը, որ օրէնսդիրները հասնին այն բանին, որ այդ կարեւոր տողը ԱՄՆ 2020 թուականի պիտոճէին մէջ պահպանուի: Հիմա մենք աշխատանքի այդ փուլին մէջ ենք», հաստատեց Մանոյեան:


Ըստ Մանոյեանի, Միացեալ Նահանգներ մէկ կողմէ կը փափաքի Ատրպէյճանին յատկացուելիք միջոցները պահպանել, միւս կողմէ կ'ուզէ Հայաստանին եւ հայութեան բան մը հասկցնել: Կայ այլ հանգամանք մը եւս, աւելի քան 20 տարիէ ի վեր Ատրպէյճան դէմ է Արցախին մարդասիրական օգնութիւն տրամադրելու ԱՄՆ-ի քաղաքականութեան, ինչ որ այս տարի կը յաջողի իրականացած տեսնել:

Մանոյեան ըսաւ, որ Ատրպէյճանին տրամադրուող 100 միլիոն տոլարի օժանդակութիւնը դադարեցնելու մասին ոչինչ կայ, ուրեմն անկա պիտի շարունակուի: «Եթէ Արցախին տրուող աջակցութիւնը զանց կ'առնուի, իսկ Ատրպէյճանին կը պահպանուի, սա ինչի՞ մասին կը վկայէ. Հայաստանի եւ Արցախի նկատմամբ Միացեալ Նահանգներու վերաբերմունքի փոփոխութեամբ», յայտնեց Մանոյեան, դիտել տալով, որ Արցախին տրուող նիւթական յատկացումը դադարեցնելը երկրի ելեւմուտքին հետ առնչութիւն չունի, այլ քաղաքական որոշում է: «ԱՄՆ-ի մէջ Հայաստանի եւ Արցախի նկատմամբ կայ վերաբերմունքի փոփոխութիւն: Սակայն, եթէ վերջնականապէս որոշուի, որ ԱՄՆ Արցախին պիտի չօգնէ, այս պարագային պիտի խախտի նաեւ Արցախի հարցով ԱՄՆ-ի չեզոք կեցուածքը՝ որպէս Միջուկի խումբի համանախագահ երկիր: Հաւասարակշռութիւնը կը խախտի Ատրպէյճանին տրուելիք այդքան մեծ նիւթական օգնութեան, իսկ Արցախին այդ փոքրիկ մարդասիրական օգնութեան գրկելու պարագային», յայտնեց ան:

ՀՀ «Նիկոլ Աղբալեան» ՈՐՈՍԱՆՈՒԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆԸ ԿԸ ՄԻԱՆԵՅ ՊՍԱԿԱՅԵՒ ԺԱՆՐԻՆ ԴԵՊՅԵՐԻՆ

Պատկաճեւ ժաիրին պատճառով Հայաստանի մէջ յայտարարուած արտակարգ դրութեան պայմաններուն մէջ քաղաքացիներուն եւ երկրին օգտակար ըլլալու նպատակով, ՀՀ «Նիկոլ Աղբալեան» Ուսանողական Միութեան անդամները եւս նախաձեռնութեան մը ձեռնարկեցին:

Արդարեւ, անոնք յատուկ դեղերով հակաէնթեցին հանրակառքեր, կանգառներ, ինքնաշարժներ, մարդոց բաժնեցին ձեռնոցներ, քթակապեր՝ պատկաճեւ ժաիրին դէմ պաշտպանուելու համար:



Ըստ միութեան վարչութեան ներկայացուցիչ Հռիփսիմէ Արշակեանի, այս օրերուն առաւել քան երեք կարիք կայ քաղաքական տարբեր հայեացքներու տէր, ընդդիմադիր կամ իշխանական ուժերու մեկտեղման: «Բնականաբար՝ ասիկա նաեւ ինչ որ տեղ օժանդակութիւն է պետական միջոցառումներուն, հակահամաճարակային այն ծրագիրներուն, գորս կ'իրականացնէ Առողջապահութեան Նախարարութիւնը, արտակարգ իրադրութեան պայմաններուն մէջ՝ պարտատուները եւ այլոք», յայտնեց ան՝ աւելցնելով, որ միութիւնը այս օրերուն բարոյապէս անթոյլատրելի կը նկատէ քաղաքական դրդապատճառներէ մեկնած հակադրուիլը եւ մեկդի քաշուիլը:

Հասարակութեան արձագանգէն շատ գոհ են ուսանողական միութեան անդամները, որովհետեւ մարդիկ ո՛չ միայն չափազանց դրական կ'ընդունին, այլեւ շատերուն կողմէ կը լսուին երախտագիտութեան խօսքեր: «Մարդիկ կան, որոնք հեռուէն իրենք կը մօտենան, կը խնդրեն պարագաներ տրամադրել կամ ախտահանել իրենց մեքենաները, գրասենեակի կամ խանութի դրան բռնակները եւ այլն: Այսինքն՝ մարդիկ կարիք ունին նման ծրագիրներու եւ աջակցութեան, եւ, կը կարծենք, պետական օղակները եւս պէտք է նկատի առնեն այս բոլորը», եզրափակեց ՀՀ «Նիկոլ Աղբալեան» Ուսանողական միութեան վարչութեան ներկայացուցիչը:

Էրտոգան Պէսք Է Դեսոսի Միջազգային Քուէպան Դեսարանին Կողմէ՝ ԱՎՐԵԿՉՈՒԹԵԱՆ ՍԱՏՐԵԼՈՒ ՀՆԱՏՐ



Յարութ Սասունեան

Անցեալ շաբաթ ես տեղեկացուցած էի, որ Նախագահ Էրտոգանի գրասենեակը Նամակ մը յղած է Թուրքիոյ կրօնական փոքրամասնութիւններու առաջնորդներուն՝ պահանջելով ստորագրել գայն եւ ապա վերադարձնել Նախագահին։ Այդ Նամակին մէջ Էրտոգան ստապատիր կը պնդէ, որ Թուրքիա առանձին է միջազգային ահաբեկչութեան դէմ պայքարի առաջին գիծին վրայ։

Հակառակ Էրտոգանի պնդումներուն, միջազգային լրատուական միջոցներու տասնեակ գէկոյցներ կը փաստեն, որ Թուրքիա, ըստ եւութեան, եղած է Սուրիոյ եւ Իրաքի մէջ Իտիլիայի ահաբեկիչներու զօրակցողներուն առաջին գիծին վրայ։

Ահմետ Ս. Եայլա սկիզբէն գիտեր Թուրքիոյ կառավարութեան կողմէ Իտիլիայի աջակցութեան մասին, քանի որ ան 2010-էն մինչեւ 2013 եղած էր Թուրքիոյ հակաահաբեկչական գործողութիւններուն ղեկավարը, իսկ 2013-2014 թուականներուն՝ հասարակական կարգի եւ քրեական քննութիւններու ղեկավարը Թուրքիոյ Շանլիուրֆա քաղաքին մէջ։ Շանլիուրֆան Իտիլիայի «ճիհատի մայրուղի»-ի վերջին կէտն էր։ 6 Մարտ 2020-ին Եայլա յօդուած մը գրած է The Investigative Journal-ին մէջ՝ մանրամասնօրէն բացայայտելով Էրտոգանի մեղակցութիւնը՝ ահաբեկչութեան։ Յօդուածին վերջապիտակը է՝ «Դատեցէ՛ք Էրտոգանը միջազգային քրեական դատարանի մէջ՝ Իտիլիային սատարելուն համար»։

Եայլա գրած է, որ 2014-ին ստիպուած եղած է լքելու իր աշխատանքը եւ թշուառ անցած, «որպէսզի չմասնակցի Էրտոգանի ոճրագործութիւններուն, որոնք կը հասնին մարդկութեան դէմ ուղղուած յանցանքներու մակարդակին»։

Ըստ Եայլայի՝ «ԻՏԼԻՊ» այսքան ուճազուած իշխանութիւն մը չէր ունենար կամ այսքան շատ մարդ չէր սպաներ, եթէ Էրտոգանի վարչակարգը չորոշէր ուղղակիօրէն կամ անուղղակիօրէն աջակցիլ անոր՝ ստեղծուելէն ի վեր (2014)։ Փաստը այն է, որ երբ Իտիլիայ 2014-ին կապուեցաւ Ռաքքայի մէջ (Սուրիա), Թուրքիոյ հետախուզական գործակալութիւնը կը պահպանէր իր մուտքի դուռը եւ պատրաստ կ'ողջուներ ճիհատական կամաւորները՝ իրենց Նահատակութեան ճամբուն վրայ։ Թուրքիա կեդրոնական հանգոյց էր Իտիլիայի աւելի քան 50 հազար օտարերկրեայ զինեալներուն համար եւ հիմնական աղբիւրը՝ Իտիլիայի մէջ օգտագործողուող արհեստագիտական նիւթերուն, ներառեալ՝ «ԻՏԼԻՊ»-ի ինքնագործ պայթուցիկ սարքերը՝ Թուրքիան եւ Իտիլիայը գործնականապէս դարձնելով դաշնակիցներ»։

Եայլա նաեւ մեջբերած է Միացեալ Նահանգներու Պետական Բաժանմունքի Հոկտեմբեր 2019-ի հրապարակումը, ուր կ'ըսուէր. «Թուրքիա կը շարունակէ տարանցիկ կէտ մնալ օտարերկրեայ այն զինեալներուն համար, որոնք կը փախաբիս միանալ «Իսլամական Պետութեան» Իրաքի եւ Սուրիոյ մէջ, ինչ որ կրնայ օգնել ահաբեկչական խումբին՝ վերակազմաւորուելու եւ վերականգնելու իր ազդեցութիւնը»։ Միացեալ Նահանգներու կառավարութիւնը նաեւ նախագուշացուցած է, որ՝ «Թուրքիոյ տարածքով անցնող օտարերկրեայ զինեալները կրնան

ծող կազմակերպութիւն մը կայ, որ ահաբեկչական կազմակերպութիւն չէ, իսկ 5,4 տոկոսը կողմակից է անոր գործողութիւններուն»։

Ըստ PEW հետազօտական կեդրոնի ուսումնասիրութեան՝ Թուրքիոյ բնակչութեան ութ առ հարիւրը (8%) բարեացակամ վերաբերում ունէր «ԻՏԼԻՊ»-ի նկատմամբ։ Սակայն, համաձայն Ահաբեկչութեան դէմ պայքարի կեդրոնէն վերջերս տարածուած գէկոյցին, թուրքերը մեծ թիւով զինեալներ տուած են «ԻՏԼԻՊ»-ին։ Մինչեւ այդ պահը կային «ԻՏԼԻՊ»-ի 9476 թուրք ահաբեկիչներ եւ աւելի քան 900 ատրայէճանցիներ ԻՏԼԻՊի շարքերուն մէջ։

Թուրքիա նաեւ կը հանդիսանայ «ԻՏԼԻՊ»-ի համար տարբեր ապրանքներու շարունակական մատակարարման աղբիւր, ներառեալ՝ կոշիկներ, համագգեստներ, բաճկոններ, սնունդ եւ ամէնէն կարեւորը՝ պայթուցիկ նիւթեր։ Մեջբերելով

ներ։ Պայալթուն եղբայրները յայտնի էին «ԻՏԼԻՊ»-ի մատակարարման գործին մէջ իրենց ունեցած դերակատարմամբ, մասնաւորապէս՝ 48 թոն ալիւմինիումի մածուկներ առաքելու գործով, որոնք օգտագործուած են «ԻՏԼԻՊ»-ի պայթուցիկ սարքերուն մէջ։ Ամէնէն կարեւորը, Պայալթուն եղբայրները սերտ յարաբերութիւններ ունեցած են Արդարութիւն եւ Զարգացում Կուսակցութեան Նախագահ Մուսթաֆա Պայալթունի հետ Շանլիուրֆայի մէջ, ուր կը գտնուէր անոնց գրասենեակը։

Թուրքիոյ Ազգային Զեռախուզութեան դերը ահաբեկչութիւնը սատարելու գործին մէջ բացայայտուեցաւ, երբ Թուրքիոյ ոստիկանութիւնը 19 Յունուար 2014-ին կանգնեցուց հետախուզութեան կողմէ շահագործուող երեք բեռնատար մեքենաներ եւ անոնցմէ յայտնաբերեց ռազմական գէկոյցներ՝ թաքնուած Սուրիա տեղափոխուող բժշկական արկղերու տակ։

Ըստ Եայլայի՝ ահաբեկչութեան սատարելէն բացի, Նախագահ Էրտոգան ձեռք բերած է նաեւ Իտիլիայի քարիւղը՝ «Փաուլըթթանս» անունը կրող թրքական ընկերութեան միջոցով, որուն ղեկավարը անոր փեսան էր՝ Պերաթ Ալպայրաքը։ «Ալպայրաք օրական կը վճարէր 3 միլիոն տոլար՝ Իտիլիայի քարիւղի ամէնէն շատ արդիւնահանման ժամանակ։ Փաստօրէն, Էրտոգան ընդունած է օրինագիծ մը, որ իրաւունք կու տար քարիւղը նաւերով տեղափոխելու եւ պայմանագիր կնքած է «Փաուլըթթանս»-ի հետ առանց հանրային ծանուցման, իբրեւ միակ լիազօրուած ընկերութիւնը»։ Ի յաւելում Իտիլիայի քարիւղի ձեռքբերման՝ Էրտոգան յանձնարարած է իր որդիին՝ Պիլալ Էրտոգանի, որ իր մայրական BMZ Group բեռնափոխադրումներու ընկերութեան միջոցով վաճառէ Իտիլիայի քարիւղը համաշխարհային շուկային մէջ»։ Աւելին, թրքական դրամական փոխանցումներու կեդրոնները օրուան ընթացքին հարիւր հազարաւոր տոլարներ փոխանցած են «ԻՏԼԻՊ» կազմակերպութեան։

Եայլա ամփոփած է. «Ի վերջոյ, «ԻՏԼԻՊ» չէր սպաներ, վիրաւորեր, ստրկացներ եւ բռնաբարեր հազարաւոր անմեղ մարդիկ, առանց հսկայական աջակցութեան, զոր կը վայելէր Թուրքիոյ կողմէ։ Էրտոգան եւ անոր մեղակցիցները պետք է դատուին Հաազայի միջազգային քրեական դատարանին կողմէ՝ մարդկութեան դէմ գործած իրենց յանցանքներուն համար...։ Թուրքիոյ Նախագահ Էրտոգանի եւ անոր մեղակցիցներուն ձեռքբերք արհեստ են։ Գոյութիւն ունեցող լաւ փաստագրուած, անառարկելի եւ անհերքելի ապացոյցներու հիման վրայ պարզ է, որ Էրտոգան ուղղակիօրէն եւ անուղղակիօրէն կը զօրակցի «ԻՏԼԻՊ»-ին»։

**Արեւելահայերէնի թարգմանեց՝
Ռուզաննա Աւագեան
Արեւմտահայերէնի վերածեց՝
Սեդա Գրիգորեան**



օգնել Իսլամական Պետութեան վերածննդին»։ Իտիլիայ իր տարածքին վրայ գտնուող բարձրաստիճան եւ աւագ անդամներէն շատերը յաջողեցաւ տեղափոխել Թուրքիա, ուր անոնք կը վարէին ահաբեկչական կազմակերպութեան ամէնօրեայ գործողութիւնները։

Եայլա յայտնած է, որ «3 Դեկտեմբեր 2019-ին ահաբեկչական պարագլուխ Համիտ Շաքիր Սապալ Պատրիսի» հանգուցեալ Ապու Պաքիր ալ Պաղտատիի գարմիկը, գերեզմանուած է Իրաքի Քիրքուք քաղաքէն դէպի հարաւ, երբ կը վերադառնար Թուրքիա գտնուող իր ապահով ապաստարանէն։ Սուրիոյ դեմոկրատական ուժերու կալանքի տակ գտնուող թուրք բանտարկեալ լրագրող Լինծի Սնէլին պատմած է Թուրքիոյ Կազիմաթապ քաղաքին մէջ պահուող «ԻՏԼԻՊ»-ի յատուկ հսկայական ապահով տան մասին։ Բանտարկեալը ըսած է՝ «հոն այնքան շատ օտարերկրեայ զինեալներ կային, այնքան տարբեր լեզուներով։ Անոնք (թուրքերը) գիտէին, թէ մենք ինչի՛ համար հոն էինք»։

Ըանի որ Թուրքիոյ ղեկավարները կ'աջակցէին «ԻՏԼԻՊ»-ին՝ Իտիլիայի նկատմամբ լայն աջակցութիւն կար նաեւ թրքական հասարակութեան շրջանակին մէջ։ «Ռոյթըրը» գործակալութիւնը յայտնած է, որ Անգարայի հետազօտական կեդրոնի կողմէ տեղի ունեցող «Թուրքիոյ ընկերային միտումներու ուսումնասիրութեան» համաձայն, հարցուածներուն 9,3 տոկոսը յայտարարած է, որ «ԻՏԼԻՊ» անունով գործ-

Հակամարտութիւններու Սպառազինութեան Զեռազօտութենէն (ՀՅԶ)՝ Եայլա հաղորդած է, որ «ԻՏԼԻՊ»՝ «առաջին հերթին Թուրքիոյ մէջ ունեցած է ձեռքբերման նպատակով գործող մեծ ցանց մը, երկրորդ՝ յստակնատակարարման ուղի Թուրքիայէն, Սուրիոյ տարածքով դէպի Իրաք»։ ՀՅԶ նաեւ բացայայտած է, որ «Թուրքիա անցումային ամէնէն կարեւոր կէտն էր պայթուցիկ սարքերու արտադրութեան մէջ օգտագործող բաղադրիչներու համար», որոնք կը պատրաստուէին «Իսլամական Պետութեան» կողմէ։ Փաստօրէն, ՀՅԶ փաստած է, որ «ԻՏԼԻՊ»-ի զինեալները՝ «գէնքի եւ գիւնախթի արտադրութեան մէջ օգտագործող ապրանքներու մեծ մասը մատակարարուած են Թուրքիոյ ներքին շուկայէն»։

Թուրք լրագրող Թոլուկ Թանիշ գործած է ռաճակուած եւ դատի տրուած է Նախագահ Էրտոգանի կողմէ ներկայացուած գրապարտութեան քննութեամբ, երբ Թանիշ բացայայտած էր, թէ ինչպէ՛ս թրքական ընկերութիւնները պայթուցիկ նիւթեր արտահանած են «ԻՏԼԻՊ»-ի համար։

Եայլա նաեւ հաղորդած է, որ «18 Նոյեմբեր 2019-ին Միացեալ Նահանգներու Գանձապետարանի արտաքին ունեցումների վերահսկման գրասենեակը երկու թուրք եղբայրներ Ահմետ եւ Իսմայիլ Պայալթունները կ'աւելնէ իբրեւ Թուրքիոյ մէջ գործող «ԻՏԼԻՊ»-ի գտնուող գործակալներ», ինչպէս նաեւ՝ Սուրիոյ եւ Թուրքիոյ մէջ գործող «ԻՏԼԻՊ»-ի հետ կապուած չորս ընկերութիւն-

ԹԱՏՐՈՆԸ ՈՐՊԷՍ ՄՐԲՈՒԹԻՒՆ



Գահիյան Լասիյան, Փաթիստան

Ինձի համար մեծ պատիւ է գրել 2020-ի Թատրոնի Միջազգային Օրուան նամակը: Համեստաբար եւ նոյն ատեն ուրախութեամբ կ'ընդունիմ, որ փաթիստանեան թատրոնը եւ նոյն ինքն Փաթիստան կը վայելեն ճանաչումը Թատրոնի Միջազգային Հաստատութեան՝ մեր ժամանակներու ամենէն ազդեցիկ ու ընդհանրական թատերական միջազգային կազմակերպութեան: Այս մէկը պատիւ է նաեւ «Աճոքա» թատրոնի հիմնադիրներէն կեանքի ընկերոջ՝ Մատիհա Ճաուհարին, որ երկու տարի առաջ այս կեանքէն հեռացաւ: «Աճոքա» թատերախումբը դժուար ճամբայ կտրեց, որպէսզի հրապարակներէն հասնի մինչեւ թատերասրահներ: Բայց համոզուած եմ, որ այս մէկը ճշմարիտ է բոլոր թատերախումբերու պարագային: Չկայ հանդարտ նաւարկութիւն, կայ միայն պայքար:

Ճանաչման իսկամ մեծամասնութեամբ երկիր մըն է, որ ականատես եղած է գիտութեան բնաստիւթիւններու, կրօնամոլ ծայրայեղներու ջարդերու եւ երեք պատերազմներու դրացի Հնդկաստանի դէմ, որուն հետ կը բաժնակցիմք նաեւ հազարամեակներու պատմութիւն ու ժամանակութիւն: Այսօր, տակաւին կ'ապրինք մեր երթալոր-դրացի երկիրին հետ մեծ պատերազմի մը վախի մէջ. պատերազմ, որ նոյնիսկ կրնայ միջուկային հրթիռներու մակարդակին հասնիլ, նկատի առած, որ երկու երկիրներն ալ միջուկային զէնքերով զինուած են:

Երբեմն կը կատակեմք ըսելով՝ «Վատ ժամանակները, լաւ ժամանակ են թատրոնի համար»: Ամենահետին մարտահրաւերն իսկ պէտք է դիմագրաւել, հակասութիւնները բացայայտել եւ առկայ կացութիւնները քայքայել: Այս առումով թատերախումբս՝ «Աճոքա»-ն ու ես 35 տարիներ շարունակ կտրեցինք դժուար ճանապարհ մը: Իսկապէս դժուար էր, պահպանել հաւասարակշռութիւնը զբաղումի եւ տեղեկութիւն փոխանցելու միջեւ, անցեալէն սորվելուն ու ապագային պատրաստուելու միջեւ, ազատ ստեղծագործ միտքին եւ իշխանութիւններուն հետ բախումներ ունենալու միջեւ, ստեղծելու ընկերային երեւոյթներ քննադատող եւ նոյն ատեն նիւթական անկախութիւն վայելող թատրոն մը, հասնելու բազմութիւններուն նոյն ատեն պահելով յառաջդիմականութիւնը: Կարելի է ըսել, որ թատրոն ստեղծողը պէտք է թէ՛ կախարդ եւ թէ՛ անպարար ըլլայ:

Փաթիստանի մէջ յստակ բաժանումներ կան սրբազանին ու պիղծին միջեւ: Պիղծին համար չկայ հոգեւոր հարցում փորձի առիթ, իսկ սրբազանին համար չկայ բաց բանավէճի հաւանականութիւնը: Իրականութեան մէջ, պահպանողական շրջանակները արուեստն ու

մշակոյթը կը նկատեն սահմանը անցած երեւոյթներ, որովհետեւ անոնք սրբութիւնները «խաղ»ի կը վերածեն: Հետեւաբար, կատարողական



World Theatre Day

International Theatre Institute ITI - World Organization for the Performing Arts

արուեստներու հետեւողներուն ասպարեզը եղած է արգելքներով լի ճամբայ մը: Անոնք պարտաւոր են նախ իրենք զիրենք փաստելու, որպէս լաւ իսկամներ ու հնագուէն քաղաքացիներ, նոյն ատեն հաստատելով որ թատրոնը, պարն ու երժշտութիւնը արտօնուած են իսկամական օրէնքներով: Մեծ թիւով պահպանողական իսկամներ կը վարանին ընդունելու կատարողական արուեստները, հակառակ անոր, որ պարի, թատրոնի ու երժշտութեան տարրերը գոյութիւն ունին իրենց առօրեայ կեանքերուն մէջ: Վերջապէս կը հանդիպինք ստորգետնեայ արուեստներու, որոնք կը ջանան սուրբն ու պիղծը միասնաբար բեմ բարձրացնել:

Փաթիստանի մէջ տիրող գիտութեան իշխանութեան շրջանին, 1980-ական թուականներուն, «Աճոքա» թատրոնը հիմնուեցաւ խումբ մը երիտասարդ արուեստագետներու կողմէն, որոնք դիմադրեցին իշխանութիւնները՝ ընկերային ու քաղաքական բովանդակութեամբ, յանդուգն եւ այլախոհ թատրոնի միջոցաւ: Անոնք նկատեցին, որ իրենց զգացումները, բարկութիւնն ու տառապատքը այնքան լաւ ձեռով կ'արտայայտուէին *սուֆիստի* մը ընդմէջէն, որ ապրած է մեզմէ 300 տարի առաջ: Այս *սուֆիստը* մեծ բանաստեղծ Պուլլեհ Շահին է: «Աճոքա» թատրոնը նկատեց, որ կարելի է քաղաքականօրէն պայթուցիկ կեցուածքներ ունենալ անոր բանաստեղծութիւններուն ընդմէջէն, մարտահրաւեր ուղղելով փտած քաղաքական ու կրօնական իշխանութիւններուն: Այդ իշխանութիւնները կրնային արգիլել կամ արտաքսել մեզ, բայց ոչ բոլորին յարգանքն ու մեծ ժողովրդականութիւնը վայելող *Սուֆիստ* բանաստեղծ մը, ինչպիսին էր Պուլլեհ Շահը: Մենք նկատեցինք, որ անոր կեանքը, իր բանաստեղծութեան պէս *տրասնաթիք*ու ծայրայեղ էր, որոնք պատճառով ալ իր կեանքի ընթացքին ենթարկուած էր կրօնական հալածանքի ու բանադրման: Այն ատեն գրեցի «Պուլլեհ» թատերգութիւնս, Պուլլեհ Շահի կեանքին ու տառապանքին մասին: Պուլլեհ, ինչպէս կոչուած է սիրող բազմութեան կողմէ ամբողջ Հարաւային Ասիոյ մէջ, Փոլնճապի շրջանի սուֆիստներու բանաստեղծական ամենաբարձրն է, որ կ'ընդդիմաւոր իր օրերու կայսրին ու փտած կրօնական իշխանութիւններուն: Այդ

ամենադժգոյն հետեւողները գրեցին ժողովուրդին լեզուով, ժողովուրդին ձգտումներուն մասին: Երաժշտութեան ու պարի մէջ անոնք գտան նոր միջոցներ անմիջական կապ ստեղծելու մարդու եւ Աստուծոյ միջեւ, արհամարհելով նայելով չարաշահող, միջակութիւն հանդիսացող կրօնաւորներուն: Անոնք արհամարհեցին սեռային ու դասակարգային տարբերութիւնները եւ մեր մոլորակը նկատեցին Ամե-

Փոլնճապի հնդկական բաժնին մէջ ներկայացնելու ընթացքին էր, 2004-ին, երբ գիւղական շրջանի հազարաւոր հանդիսատեսներ գոհունակութեամբ ընդունեցին ներկայացումը: Ներկայացումի ամարտին տարիքոտ մարդ մը մօտեցաւ մեծ *սուֆիստի* դերը ներկայացանող դերասանին, խնդրելով, որ օրհնէ իր հիւանդ թոռնիկը որպէսզի ան բժըշկուի: «Բայց պապածի՛, ես Պուլլեհ Շահը չեմ, ես պարզապէս անոր դերը

կը խաղամ», պատասխանեց անակնկալի եկած դերասանը, բայց ծերունին պնդեց. «Կ'աղաչեմ, թոռնիկս ծանր հիւանդ է եւ եթէ դուն աղօթես, ան պիտի բժշկուի»: Դերասանին առաջարկեցինք իրականացնել ծերունիին փափաքը եւ ան վերջապէս օրհնեց հիւանդ երեխան: Գոհունակ ծերունին չհեռացած, դերասանին ըսաւ. «Տղան, դուն պարզապէս դերասան մը չես, դուն վերածնած Պուլլեհ Շահն ես, անոր Աւաթարը՝ վերամարմաւորումը»: Յանկարծ մեզի համար թատրոնի եւ դերասանութեան սոր հասկացութիւն մը ծնաւ, ուր դերասանը կը վերածուի իր ներկայացուցած տիպարին վերամարմաւորումը:

«Պուլլեհ» ներկայացման շրջագայութիւններու 18 տարուան ընթացքին, նմանօրինակ բազմաթիւ դէպքերու հանդիպեցանք, ուր հանդիսատեսին համար թատրոնը ոչ միայն զբաղումի կամ մտային պաշար հարստացնելու վայր էր, այլ նաեւ հոգեւոր հարստացման առիթ: Նոյնիսկ դերասանը, որ կը խաղար Պուլլեհ Շահին դերը, ինք վերածուեցաւ *սուֆիստ* բանաստեղծի եւ մինչեւ օրս հրատարակած է երկու բանաստեղծական հատոր: Ներկայացման մասնակցող դերասանները, կը հաստատեն, որ երբեք կը բարձրանան Պուլլեհ Շահի հոգին կարծես իրենց հետ կ'ըլլայ եւ զիրենք կը տանի դէպի հոգեւոր նոր բարձրունքներ: Հնդկ մասնագետ մը, անդրադառնալով մեր ներկայացման գրած էր. «Երբ թատրոնը կը վերածուի սրբութեան»:

Ես աշխարհիկ մարդ եմ եւ *սուֆիզմով* հետաքրքրուած եմ զուտ մշակութային դիտարկումներով: Առաւելաբար հետաքրքրուած եմ Փոլնճապի շրջանի *սուֆիզմի* կատարողական-գեղարուեստական կողմերով, ի տարբերութիւն հանդիսատեսին, որ շատ հաւանաբ ծայրայեղ կրօնամոլ է, բայց խորապէս հաւատացեալ է: Սերտելով Պուլլեհ Շահին նման պատմութիւններ, որոնք որքան շատ են մեր մշակութիւն մէջ, կարելի կ'ըլլայ կամուրջ մը ստեղծել թատրոնի գործիչին եւ անձնօթ բայց անկեղծ հանդիսատեսին միջեւ: Միասնաբար մենք կրնանք բացայայտել թատրոնի հոգեւոր խորքերը, կառուցել կամուրջներ ներկային եւ անցեալին միջեւ, առաջ-

Անգլերէն թարգմանեց Յուշիկ Ղազարեան Շաբ. 1 էջ 8

ԵՌԵՐԱԶՐՈՅՑ. ՄԵՆՔ ԵՒ ԶՐՈՅՑԻ ՄԵՐ ՄՇԱԿՈՅԹԸ...

Զրոյցը երբեմն նոր հորիզոններ կը բանայ մեր դիմաց, գրուցելով տարբեր միջավայրերու, տարբեր երկիրներու մէջ ապրող, տարբեր կարծիք ու մտածելակերպ ունեցող գործընկերներու հետ, ասելի լայն եւ բազմալոկալ մանկի հայեացքով կը նայինք որեւէ հարցի: Երբեմն նոր մտքեր կը ծնին, կարծիքներ կը հանդիպին, գործակցութեան եղանակներ կ'ուրուագծուին գրոյցի ճամբով:



Մտամարզանք մը չէ միայն գրոյցը, կարծիքներու հանդիպում մըն է, որ ոչ միայն տեսակետներու փոխանակման կը նպաստէ, այլեւ՝ շատ մը մտահոգութիւններու փարատումին, նոյնիսկ գիրար ասելի լաւ ճանչնալու, հասկնալու կրնայ նպաստել եւ արդիւնքի հասնելու մղիչ ազդակ հանդիսանալ, եթէ մշակոյթի վերածուի:

Յայկական մեր միջավայրին մէջ այս մշակոյթը կը պահուի: Մեր ոչ այնքան մեծ հայաշխարհին մէջ երբեմն գրուցելն անգամ անկարելի կը թուի, սկսած գրոյցներն իսկ անաւարտ կը մնան, խուլ ձեւանալու մշակոյթ մը կը սկսի փոխարինել գրոյցը ու կը վերոյիշէ երգիծաբան Յ. Պարոնեանի «Խօսակցութիւնը Մեռելոց»ը, ուր մարդասիրութիւնը կը դառնայ մեռելածին, ծնելամահ, իսկ անմահ ճշմարտութիւնը ծերացած ու հաշմանդամ կը մեկնի անդի աշխարհ... Այսպիսի նեղ սահմաններու մէջ կը թաղուին երբեմն գրոյցները, կը պակսին մտածող, ընթերցող տարրին համար արտայայտուելու միջավայր ստեղծելու ջանքերը:

Այս նեղ սահմանները հատել կը փորձէ «Հայերէն Պլօկ»ը, երբ անոր խմբագիր Իշխան Զիֆթեանը, օգտուելով առցանց հարդոյակցութեան կարելիութիւններէն, ամսական հերթականութեամբ եթերագրոյցներ կը կազմակերպէ տարբեր նիւթերու շուրջ, «պլօկ»ականներուն եւ գեկուցաբերի մը մասնակցութեամբ արծարծելով հարց մը, քննարկելով անոր տարբեր կողմերը, կարծիք-հակակարծիք իրարու դէմ բերելով եւ շահեկան անարտ ունեցող գրոյց մը վարելով:

Նախորդ Չորեքշաբթի եւ Հինգշաբթի, 17 եւ 18 Մարտի երեկոյեան տեղի ունեցած եթերագրոյցին նիւթն էր «Մամուլն ու Արհեստագիտութիւնը», գեկուցաբերը «Գանձասար» շաբաթաթերթի խմբագիր

Զարմիկ Պողիկեանն էր:

Երկու օրերու ընթացքին երեքական ժամ տեւող եթերագրոյցին մասնակցեցան տարբեր երկիրներէ «Հայերէն Պլօկ»ի ասելի քան տասը աշխատակիցներ:

Զեկուցաբերը նախ ներկայացուց արհեստագիտութեան զարգացման ազդեցութիւնը մամուլին վրայ, դիտել տալով որ արհեստագիտութեան յառաջընթացին հետ ամենէն ազդեցիկ զարգացման հոլովոյթը ապրեցաւ մամուլը, յատկապէս հասարակական ցանցերու բաց համակարգին բանեցումով:

Ան յայտնեց, որ արդի հասարակութիւնը կարելի չէ պատկերացնել առանց ելեկտրոնային մամուլին: Ընկերային ցանցերը վրդուլ աշխարհին շարժիչ հիմնական ազդակներն են, որոնք անաւորակ մամուլէն կը տարբերին շարք մը յատկութիւններով, ինչպէս ընթերցող-թերթ փոխազդեցութիւնը, արագ հասանելիութիւնն ու ընթերցողներու լայն շրջանակ ունենալու առաւելութիւնը, գրողին ու լրագրողին համար անկախ հարթակի ստեղծումը, գործակցութեան ասելի լայն կարելիութիւններու առկայութիւնը աշխատակիցներու եւ լրատուամիջոցներու միջեւ, միեւնոյն ատեն փորձառութիւններու փոխանակման, գիրի, պատկերի եւ ձայնի միացեալ օգտագործման կարելիութիւնը, մամուլ սպասաւորին մշտնադրոգ որակի պահանջը եւ այլն: Անդրադարձ կատարուեցաւ նաեւ արհեստագիտութեան զարգացման հետ երեւելի դարձող բացասական կողմերու, ինչպէս լեզուի աղաւաղման, յաճախ որակի հաշտւոյն տեղի ունեցող լրատուամիջոցներու մրցավազքին, տպագիր մամուլի պահանջի նուազումին, ապատեղեկատուութեան արշաւներու աճին, անհատական թէ պետական մակարդակներու վրայ տեղեկատուական ապահովութեան խոցելիութեան եւ այլն:

Եզրակացնելով գրուցակիցները յատկապէս նկատել տուին, որ զարգացումը միայն արհեստագիտութեան միջոցներու օգտագործումով սահմանափակելու փոխարէն, անհրաժեշտ է աշխատանք տանիլ արհեստագիտութեան օգտագործումը որեւէ թերթի կամ կայքի բովանդակութեան հարստացման եւ կարծիքներու այլազանութեան ծառայեցնելու համար նաեւ:

Զրուցակիցները «Գանձասար»ի խմբագիրին հարցումներ ուղղեցին, առաջարկներ ներկայացուցին, տեղի ունեցան քննարկումներ, այլազան նիւթերու վերաբերող թեր ու դէմ կարծիքներ հնչեցին եւ անկեղծ, անմիջական մթնոլորտի մը մէջ անարտին հասաւ գրոյցը:

Զեկուցաբերը շնորհակալութիւն յայտնելով «Հայերէն Պլօկ»ի խմբագրութեան, շնորհալորեց գրական այս կայքի հիմնադրման 4-ամեակը, դիտել տալով որ արեւմտահայ առցանց մամուլին մէջ եզակի կայք մըն է ան՝ իր հարուստ բովանդակութեամբ, յանդուզն գրիչներով, ինչպէս նաեւ ոճի եւ լեզուի իւրական այս կայքի հիմնադրման 4-ամեակը, դիտել տալով որ արեւմտահայ առցանց մամուլին մէջ եզակի կայք մըն է ան՝ իր հարուստ բովանդակութեամբ, յանդուզն գրիչներով, ինչպէս նաեւ ոճի եւ լեզուի իւրական

ՄԻՋԻՆՔՆ ՈՒ ԲՈՐՈՆԱԿ

Մանուկ Արդ. Պարիսպանեան

Պսակածէ «Քորոնա» ժահրը դժբախտաբար դարձաւ մահաժամը բոլոր մարդկութեան: Այսօր ամբողջ աշխարհը իր բոլոր քաղաքներով եւ բոլոր ոլորտներով՝ տնտեսական, քաղաքական, կրթական, գիտական կը պայքարին մահ սփռող *Քորոնային* դէմ: Եւ այս հիւանդութիւնը այսօր Սուրիոյ մեր Հայրենիքին սահմաններուն վրայ կեցած, կ'ուզէ մեր սրտերը խոցել իր աներեւոյթ մագիլներով եւ վերջ տալով մեր կեանքին:

Սակայն այս յոռի երեւոյթը յուսահատութեան պատճառ պէտք չէ դառնայ, ոչ ալ ընկրկումի առիթ մը ըլլայ, այլ համախմբումի, բարձր կորովի եւ բարոյական քաջալերանքներ շնչելու առիթ մը պէտք է դառնայ այն:

Ինչպէս *Քորոնան*, նոյնպէս Միջինքը գերագանցապէս քաջալերանքի եւ վերանորոգումի առիթներ են: Միջինքը մեր եկեղեցւոյ մէջ ծիսական յատուկ իմաստ չունի, այլ ժամանակի ընթացքին անաւորաբար փոխանցուած եւ հաստատուած է հաւատացեալներուն սրտերուն եւ մտքերուն մէջ: Պարզապէս յիշեցնելու, որ քառասունեայ պահեցողութեան կիսուն հասանք: Բնականաբար Միջինքը առիթ մըն է, մտածելու թէ ի՞նչ ըրինք պահեցողութեան առաջին կիսուն, եւ ինչ պէտք է ընենք, կամ պէտք չէ ընենք:



Մեզմէ իւրաքանչիւրը կրնայ ապրիլ իրեն յատուկ եւ հարագատ այն պահը, որ Միջինքը կը կոչուի: Խորհրդանշական ձեւով Միջինքը այն պահն է, ուր հաւատացեալը կ'անդրադառնայ իր կեանքի սխալ ընթացքին, ինքզինքը քննելով ու սրբագրելով կը փոխէ իր կեանքը եւ վերելք կ'արձանագրէ:

Աստուածաշունչին մէջ շատ են օրինակները այս իմաստով: Օրինակ Յովնան մարգարէն կէտ ձուկին փորին մէջ ապրեցաւ իր կեանքին «Միջինք»ը, որոշելով Աստուծոյ հետեւիլ: Նոյնպէս կարելի է յիշել Անանայ որդին, Պօղոս Առաքեալը եւ Չաքոս Կարճահասակը, որ Զրիստոսը ճանչնալէ տք ապրեցաւ իր կեանքին «Միջինք» եւ որոշեց հարստութեան կէտը բաժնել (Ղկ 19.8):

Անկախ որ *Քորոնան* կրնայ սպանել եւ Միջինքը կրնայ կեանք փրկել, սակայն երկուքը առիթ են հաստատակամօրէն շարունակելու մեր կեանքը, որովհետեւ Զրիստոսեան պէտք է ապրի Աստուծոյ ուղ-

ղութիւնը կիզակետ դարձնելով: Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Ամէն ինչ Աստուծոյ փառքին համար է» (Ա. Կր 10.31): Իբրեւ հաւատացեալներ պէտք է շարունակենք մեր լեռնագնացութիւնը, Աստուծոյ կնքած ուխտին հաւատարիմ մնալով: *Քորոնան* եւ Միջինքը պարզապէս հանգըրուաններ են, կայարաններ, որոնցմէ ուշ կամ կանուխ պիտի անցնինք: Այս հանգ-րուանը քաջալերանքի արթնութեան եւ անտոմի օրեր են, որ հաւատքով եւ համբերութեամբ պէտք է տանինք:

Զոյգ առիթները հրաւիրող ազդակներ են: Զգոյշ ըլլալու եւ խոնկութեան չմատնուելու առիթներ են: Որովհետեւ համաճարակներ եւ պատերազմներ պիտի պատահին, եւ այս պատճառով է որ Աւետարանը կը գգուշացնէ մեզի որ չխառովինք (Մտ 4.6): Ուստի մեր ապրելակերպին ուշադիր ըլլալով, վարուիք իմաստութեամբ, առանց հետեւելու ժողովուրդի եւ աշխարհի մտահոգութիւններուն, միշտ ջանանք հասկնալ թէ Աստուած ի՞նչ կ'ուզէ մեզմէ (Եփ 5.10), ըլլայ Միջինքի խորհուրդին ճամբով կամ *Քորոնա-*

յի ճամբով: Այս առիթները հոգեւոր Արթնութեան կրնան առաջնորդել, երբ Զրիստոսով դուրս ելլենք եւ գերի չդառնանք աշխարհին, ինչպէս Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Արթնցի՛ր, ո՛վ քնացած, դուրս եկուր մեռելութենէր, եւ Զրիստոս պիտի լուսաւորէ քեզ» (Եփ 5.14):

Այս շրջանին մեր ժամանակը լաւագոյն ձեւով օգտագործելով աղօթենք, Աստուծոյ ողորմութիւնը խնդրելու մեր գործած բոլոր մեղքերուն համար: Այս շրջանը առիթ է քննելու մեր անձերը թէ ինչ կատարած ենք մեր կեանքի ընթացքին, որ պէտք է սրբագրուի եւ աշխատինք սրբագրել: Մեծագոյն առիթ մըն է այս շրջանը, որ մեր ընտանեկան յարաբերութիւնները ամրապնդենք եւ ընտանեկան սրբութիւնը կեանքի կոչենք: Ընտանեկան Միջինքին խորհուրդը վերապրեցնելով, պահենք ընտանեկան սրբութիւնը:

Չորոյցի այս մշակոյթը պահելու ու զարգացնելը շատ մը հարցերու լուծման առաջնորդող նախաքայլ չէ՞ միթէ:

Թողակից

Շնչդեպի 125-ամեակին առիթով

ԳՐԱԳԵՏ ԲԵՆԻԱՄԻՆ
ՆՈՒՐԻԿԵԱՆԵՆ
ՅԱՄԵՅՈՂ ՏԱԲՈՒԿ ՇՈՒՆՉ ՄԸ...



Լեոն Շանոյեան

- Նուրիկեան... Ո՞վ է այս ան- ծը,- հարց պիտի տան ինձի տասըն- տակ ընթերցողներ, կարդալէ ետք վերի անունը:

Գիտեմ, որ Բենիամին Նուրիկեանը մոռցուած անուն մըն է այլ լեւու: Ո՞վ կը յիշէ Նուրիկեանը այս օրերուն, մանաւանդ ո՞վ կը կարդայ զայն...: Մինչդէռ, հայ գիրի այս նուիրեալ ու բարեհամբոյր սպասարկուն ամերիկահայ առաջին սերունդի ամենափայլուն գրողներէն մէկն էր՝ անցեալ դարու 20-ական թուականներէն սկսեալ մինչեւ 70-ականներ:

Ես յիշեցի Խարբերոյի Զիւսենիկ գիւղի արեւոտ երկնքին տակ իր աչքերը լոյսին բացած այս գաւառացի տղան, որովհետեւ իմ հին թղթապանակներուն մէջ պատահաբար գտայ երկու օրինակներ անոր խմբագրած «Նոր Գիր» եռամսեայէն: Թուականներ՝ «Աշուն, 1943» եւ «Գարուն, 1946»:

Գրական թերթի մը երկու թիւերը, որոնք կարծեք Շահան Շահնուրի «գոյգ մը կարմիր տետրակներ»ը ըլլային...:


Չարմացա՛յ: 1943-ը պատերազմի տարի էր: Բ. Աշխարհամարտը դեռ կը շարունակուէր իր ամբողջ սաստկութեամբ ու քայքայիչ անդրադարձումներով: Մինչ Նուրիկեան, ուրեմն, Նիւ Եորքի իր անկիւնէն, հրացաններու շաչիւնին եւ ռումբերու որոտումին կը հակադրէր Յայ Գիրի մեղմօրո՞ր ձայնը: Դեռ անելին, ան միջոցներ գտեր էր կ'երեւի, որ զինամարտի այդ փոթորկոտ ու մռայլ տարիներուն իր պարբերաթերթին թիւերը Նիւ Եորքէն ճամբայելիէին ու Ատլանտեան ովկիանոսը կտրելով հասնէին հեռաւոր ափեր, մինչեւ Զալէա...:

Թե՛ հաճոյքով եւ թէ տխրութեամբ թերթատեցի «Նոր Գիր»-ի այս որակաւոր թիւերը, որովհետեւ նախ զգացի պարբերաթերթին էջերէն փոխանցուող տոհմիկ տաքունկ շունչ մը (որ կազդուրեց գիս), ապա սկսայ մտածել հին սերունդի մեր գրողներուն անօրինակ գոհողութեան ու աներեր հաւատքին վրայ: Դիւրի՞ն էր Բենիամին Նուրիկեանի գործը՝ երբ ան 1939-1954, լման 16 տարի, Նիւ Եորքի նման մեծ քաղաքի մը մէջ, բոլորովին առանձինն, իր սեփական միջոցներով խմբագրեց ու հրատարակեց գուտ գրականութեան եւ արուեստի նուիրուած այս հանդէսը:

Այսօր, ո՞վ կը համարձակի կատարել այդպիսի խենթութիւն մը...: Ո՞վ կը լյանդակի միայնակ դիտեցնել գրական պարբերաթերթ մը՝ գորովալից մօր մը վրայ:

Պետք է մոռնալ անշուշտ, որ այդ տարիներուն ամերիկահայ գաղութը դեռ հայախօս էր լայն չափով: Գիր-գրականութեան հանդէպ ամկայ էր որոշ հետաքրքրութիւն մը:

բազմաթիւ հայերէն թերթեր կը հրատարակուէին մանաւանդ Ամերիկայի արեւելեան ափին.- կար Պոսթընի նշանաւոր «Յայրենիք» ամսագիրը, կային «Յայրենիք» ու «Պայքար» օրաթերթերը, դեռ ողջ էին հայ ակտարականներու «Յայաստանի Կոչնակ»ն ու հնչակեաններու



«Երիտասարդ Յայաստան»ը, որը էր Սամուէլ Թումայեանի «Նոր Աշխարհ» շաբաթաթերթը, Նիւ Եորքի Ազգ. Առաջնորդարանը կը շարունակէր հրատարակել «Յայաստանեայց Ելեղեցի» ամսաթերթը եւ այլն: Կային նաեւ հայերէնով ստեղծագործող մեծաթիւ գրողներ (Յամաստեղ, Արամ Յայկազ, Վահէ Յայկ, Սուրէն Մանուէլեան, Յակոբ Ասատուրեան, Անդրանիկ Անդրեասեան, Ալեք Գլըճեան, Ա. Արփիւն, Յովհաննէս Աւագեան, Յեղիւն Դալիթեան, Միհրդատ Թիրեաքեան, Յակոբ Աստուրեան, Վահրամ Տատրեան, Կարապետ Սիտալ եւ այլն, եւ այլն):

Բենիամին Նուրիկեանի գոյգ մը «Նոր Գիր»երը իմ ափին մէջ մտացին անելի քան երկու ժամ...

Կը սկսիմ մի առ մի դարձնել էջերը «Նոր Գիր»ին: «Գիր»ը՝ ինքնին, «Նոր» է անշուշտ,- 1600-ամեայ Յայոց Այբուբենին մեզի այնքան սիրելի 38 գիրերն են, Մեսրոպեան տառերը, որոնք ակնախտիղ պերճութեամբ փռուած են պարբերաթերթին մէջ ծայրէն միւսը:

«Նոր»ը, կամ անելի ճշգրտօրէն՝ նորոգականը, գրութիւններն են, բայց նաեւ՝ ատոնց ընդմէջէն ցոլացող տոհմիկ շունչն ու քաղցրիկ բարբառը, որ գուլպալ արեւմտահայերէնէ:

Միշտ երանութեամբ ու կարօտի զգացումներով երթեթափեմ եմ հայ մամուլի հին հաւաքածոնէրը՝ 30-ական թուականներու հին «Բազմավէպ»երը, 50-ական թուականներու հին «Նայիրի»ները, 60-ական թուականներու հին «Սփիւռք»ները, հին «Բագին»ներն ու «Շիրակ»ները, հին «Յասկ»երն ու Չօպանեանի «Ասահիտ»ները: Ճիշդ է

որ խունացած են անոնց էջերը, սակայն թարմ ու առոյգ է հոն գործածուած լեզուն, պատկերաւոր ու առիւթնող է ոճը անոնց պատկառելի խմբագիրներուն՝ բաղդատաբար ինձի ժամանակակից հայատառ այսօրուան մամուլին:

Կանգ կ'առնեմ կարգաւ աշխատակիցներու անուններուն վրայ: 1943-ի թիւին մէջ իրենց ստորագրութիւնը դրեր են Սուրէն Մանուէլեան, Վահրամ Սօֆեան, Յովհաննէս Աւագեան, Արիս Շաքլեան (Դամասկոսէն) եւ Բ. Նուրիկեան (տեղ մը՝ հարագատ անուն-մականունով, այլ տեղ մը՝ Մեհաւոր ծածկանունով): Ոմանք հանդէս եկեր են արծակ գրութիւններով, ոմանք՝ չափածոյ ստեղծագործութիւններով: Թիւին առանձին մէկ գլուխին տակ հիւրընկալուէր են Խորի. Յայաստանէն շարք մը գրողներ՝ «պատերազմական գրականութիւնէն արժեքաւոր նմոյշներով», ինչպէս կը նշուի պարբերաթերթին մայր կողքին վրայ:

Այո՛, այդ տարիներուն «պատերազմական գրականութիւն»ը Յայաստանի մէջ կը գտնուէր իր բարձրակետին վրայ, որովհետեւ մեր գրողներէն շատ-շատեր ճակատ մեկներ էին՝ Յայրենական Մեծ Պատերազմին մասնակցելու համար: Տուն վերադառնալէ ետք՝ անոնք մշակել էին վեցամեայ պատերազմին ձօնուած իւրայատուկ գրականութիւն մը: Չորօրինակ, Սերո Խան-գաղեսի (1915-1998) երկու վեպերը՝ «Մեր Գնդի Մարդիկ»ն ու «Երեք Տարի 291 օր»ը, կու գան այդ շրջանէն: Նմանապէս, արձակագիր Քրիստափոր Թափալցեան (1910-1967) գրի առած ու հրատարակած էր «Պատերազմ» խորագրով ընդարձակածաւալ վեպ մը՝ 2600 էջերով ու 4 հաստափոր հատորներով...:

«Նոր Գիր»-ի այս նոյն թիւին մէջ՝ Ակնայ Բիկեան գիւղէն գրականագետ Յովհաննէս Աւագեանն ալ կը ստիպէ գիս, որ կանգ առնեմ իր գրութեան վրայ: Աւագեան ամերիկաբնակ էր: Ան գրադատական յօդուած մը ստորագրած է Յակոբ Օշականի «Յայ Գրականութիւն» մեծղի դասագիրքին մասին, որ լոյս ընծայուած էր այդ օրերուն, Երուսաղէմի Ս. Յակոբեանց տպարանէն: Աւագեան բաւական խիստ լեզու մը կը գործածէ Օշականի հանդէպ, կը հակաճառէ անոր կարգ մը դատումներուն կամ գրական տարակուսելի վճիռներուն, կը մատնանշէ դասագիրքին մէջ երեւցող շարք մը թերիներ կամ բացթողումներ, սակայն միաժամանակ նկատել կու տայ, որ մեծանուն քննադատը իր այս դպրոցական հաւաքածոյին մէջ զգալի բարեշրջութիւն մը ցոյց տուած է՝ անելի մեղմ ու բարեացակամ վարուելով անցեալին ի՞ր իսկ կողմէ դատաւիտութեամբ կարգ մը գրողներու (Լ. Շանթ, Չօպանեան եւ այլք) վաստակին նկատմամբ: Ամէն պարագայի, Աւագեան կը հաստատէ որ Օշականի այս գործը «արժեքաւոր երկ մըն է, որ իր վրայ կը կրէ անխոնջ աշխատութեան, խոր մտածողութեան եւ ճոխ հմտութեան կկիրքը»:

Պարբերաթերթին միւս՝ 1946-ի թիւը, որ յետպատերազմեան թիւ մըն է, իր կողքի շապիկին վրայ ունի Կոմիտաս վարդապետի մէկ լուսանկարը՝ փակեղը գլխուն: Ներսի էջերուն մէջ ալ հայ երաժշտութեան մեծ քուրմին մասին ծաւալուն եւ հիւթեղ գրութիւն մը ունի ամերիկահայ վիպագիր Յակոբ Յ. Ասատուրեան (1903-2003), որ Կոմիտասեան երգերու մեկնաբան ու հմուտ վերլուծող մըն էր միաժամանակ:

Քերթուածներ ունին Սարգիս Սահակեան, Վահրամ Սօֆեան, Խաչիկ Մարկոսեան, Չարեհ Մելքոնեան եւ Սմբատ Տերունեան (Կիպրոսէն), արձակ էջեր՝ Արամ Ազնաւուրեան (Տիթոյթ), Յեղիւն Դալիթեան, Սահակ Պալըզճեան եւ Յ. Օշական: Իբրեւ շարունակելի թղթածրար՝ հրապարակուած է փունջ մը Վահան Թեքեանի այն նշանաւոր նամակներէն, գորս ուղղած էր ան Ամերիկա մեկնած իր «հոգեզաւակ»ին՝ Չաւեն Սիւրմէլեանին:

«Նոր Գիր»ը տեղտուած Բենիամին Նուրիկեանի ուղղեալ նամակի մըն ալ, որ ստորագրուած է փարիզաբնակ խմբագիր, գրող եւ Նուպարեան մատենադարանի բազմամեայ տնօրէն Արամ Աստուրեանի (1875-1952) կողմէ: Նամակը բաւական երկար է, գրուած է 1945 Սեպտեմբերին (պատերազմի ավարտէն ետք), ունի տեղեկատուական բնոյթ ու խիստ հետաքրքրական է՝ քանի մը առումներով:

Ինչի՞ մասին կը խօսի Արամ Աստուրեան Պաքստան պատերազմի պատմագիրն ու «Այն Սեւ Օրերուն» յուշագրութեան ծանօթ հեղինակը:

Ան նախ մանրամասն տեղեկութիւններ կու տայ Բ. Աշխարհամարտի տարիներուն ֆրանսահայ գաղութի գրահրատարակչական իրագործումներուն մասին, որոնք ուղղակի շշմեցուցիչ են...: Ճիշդ է, որ պատերազմի շրջանին մահացեր են Տիգրան Կամարակալի, Լեւոն Բաշալեանի, բժ. Վահրամ Թորգոմեանի, Վահրամ Թաթուլի, Մերուժան Պարսամեանի կամ Ա. Սեմայի (Գեղամ Աթմաճեան) նման ֆրանսաբնակ գրչի սպասարկուներ, սակայն նոյն այդ տարիներուն Փարիզի մէջ հրատարակուէր են անելի քան 60 (սխալ չկարդացիք՝ վաթսու՛ն) հայերէն նոր գիրքեր...:

Բայց ինչպէ՞ս: Չե՛ որ Փարիզը գրաւուած էր Յիթլերի գերման բանակներուն կողմէ ու տպարանները ենթակայ էին Կեսթափոյի ամենախիստ գրաքննութեան:

Մերիները ճարպիկօրէն գտերն են էլքի ճամբան...: Կարդանք Աստուրեանի նամակը:

- Վերոյիշեալ վաթսուն հայերէն գիրքերը տպուեցան գերմաններէն գաղտնի, սեւ շուկայէն շատ սուղ գնուած թուղթերով: Յրատարակիչները մէկ գողնութիւն միայն կ'ընէին՝ թուականն էլ էին դնէր տպուած գիրքերուն վրայ, եւ այս կերպով բոլորն ալ անցան գերման ոստիկանութեան քիթին տակէն...:


Ու Արամ Աստուրեան կը թուէ այդ նորատիպ գիրքերէն խառնի- **Շար.՝ էջ 8**

ԴՐՁԵԱԼ corona virus

Արմենակ Եղիայեան

Ինչպէս կ'ակնկալուեր, corona virus-ը աշխարհի տարածքին կը շարունակէ գործել իր մարդկային աւերը, իսկ մեր մէջ մարդկային վրայ կ'աւելնայ... լեզուական աւեր մըն ալ:

Է՛հ, մեզ հայ են ասում... Պետք է ուրիշներէն քիչ մը աւելին ունենայինք. ահա այս «գիտակցութեամբ» ալ՝ հոն, ուր օտարները գոհացած են մէկ անունով, հայերէնի մէջ արդէն ունենինք չորս անուն, անկէ ետք յառաջացան նորերը եւս. ահաւասիկ՝ կորոնավիրուս, թագավարակ, գորոնա ժահր, քորոնա ժահր, պսակածէ ժահր, պսակածէ վարակ, թագաժահր, պսակաժահր, ուրեմն՝ ութ անուն... գալիքներէն բացի:



Պէ՛տք է մտահոգուիլ այս իրավիճակով, թէ՞ ոչ:

Այստեղ հարց մը չունինք անոնց հետ, որոնք ընտրած են ամբողջական կամ մասնակի օտար եզր մը՝ կորոնավիրուս, գորոնա ժահր, քորոնա ժահր. օտարամոլութեան ժահիրին տրուած ծանօթ տուրքեր են ասոնք:

Կեդրոնական, ուրեմն, բոլորովին հայեցի մտածուած եզրերուն վրայ:

- ա) - թագաժահր, - թագավարակ, - պսակաժահր,
- բ) - պսակածէ ժահր, - պսակածէ վարակ:

Անցնող օրերուն բժշկագիտական բաւական արժեքաւոր յօդուածներ հրատարակուեցան մեր մէջ, սակայն անոնց կիրարկած եզրերը այնքան ալ ներդաշնակ չէին իրենց բովանդակութեան հետ:

Ուրեմն բերուած ցանկի հինգ անուններուն երեքը համադիր բարդ բառեր են, որոնց երկու բաղադրիչները գոյական են, վերջին երկուքը՝ յարադիր բարդ բառեր, որոնց առաջինը ածական մըն է, երկրորդը գոյական մը:

Քննենք հայերէնի բառակազմութեան այս երկու կաղապարները:

ա) Առաջին խումբը՝ գոյական+ա+գոյական

Երբ բարդ բառին բաղադրիչները գոյական են, այդ բաղադրիչներէն առաջինը կ'ընկալուի իբրեւ սեռական հոլով յատկացուցիչը երկրորդին. օրինակ՝ գետածի կը նշանակէ գետի ձի, դաշտամուկ կը նշանակէ դաշտի մուկ: Եւ այսպէս շարունակ: Արդ, մեզ հետաքրքրող վերի ցանկին առաջին երեք եզրերը այս տրամաբանութեամբ պիտի նշանակեն՝

- թագի ժահր
- թագի վարակ
- պսակի ժահր

Այլ խօսքով՝ երեքին մէջ ալ կայ պատկանելութեան գաղափարը, ուր պատկանողը երկրորդ բաղադրիչն է, որ կը պատկանի առաջինին. ժահրը կը պատկանի թագին, վարակը կը պատկանի թագին, ժահրը կը պատկանի պսակին:

Այս իմաստները կրնա՞ն գոհացնել մեզ, հա՞շտ են մեր հայեցի մտածողութեան ու ճաշակին հետ: Եւ յետոյ՝ ճիշդ կը թարգմանեն ինտրոյ առարկայ ժահիրին բնութիւնը: Corona virus լատիներէն բառակազմակերպութեան մէջ պատկանելութեան գաղափարը բացարձակապէս չկայ. corona-ն սեռական հոլով յատկացուցիչ չէ եւ virus-ն ալ իրեն չի պատկանիր: Corona-ն ցոյց կու տայ ձեւ մը, եւ virus-ին ձեւն է այդ:

բ) Մինչդեռ պսակածէ ժահր եւ պսակածէ վարակ՝ ասոնք կը գոհացնեն մեր պահանջը, քանի կը ներկայացնեն բառային այնպիսի կառոյցներ, ուր առաջինը ցոյց կու տայ երկրորդին ձեւը, ճիշդ corona virus-ին իմաստային կաղապարով:

Իսկ այս երկուքէն ո՞ր մէկը նախընտրելի է, քանի ընդունելի չէ, որ նոյն մանրէն կրէ երկու տարբեր անուններ, - պսակածէ ժահր, թէ՞ պսակածէ վարակ¹:

Առաջին բաղադրիչները նոյնն են՝ պսակածէ. ուստի բաղադրուած երկրորդ՝ ժահր եւ վարակ բաղադրիչները:

Վարակ եզրը սխալ չէ, միայն թէ ան շատ ընդհանուր է. վարակ կը կոչուին բոլոր մանրէները անխտիր, որոնք կրնան վնասել առողջութեան:

Մինչդեռ ժահր եզրը կը բնորոշէ վարակի այն ենթատեսակները, որոնք արդի մանրադիտակներով տեսանելի չեն, այսինքն՝ 0,2 միկրոնէն աւելի փոքր են, որ կը նշանակէ մէկ միլիմետրի հինգ միլիոներորդ մասը: Ասոնք ենթամանրադիտակային (submicroscopique) մանրէներ են, որոնք ի յայտ կու գան տարբեր հետազօտումներով:

Այս տուեալներով՝ ժահրը վարակի տեսակ մըն է:

Վարակը ընդհանուր անուն մըն է:

Ժահրը մասնաւորող անուն մըն է:

Եւ բնական է, որ ընտրուի մասնաւորող անունը:

Բաղադրուածք՝ արհեստաւոր եւ ոսկերիչ, ծառ եւ նշենի, մետաղ եւ երկաթ, կազ եւ ջրածին, պտուղ եւ խնձոր գոյգերը:

Վարակը՝ արհեստաւորին, ծառին... դիրքին մէջ է, իսկ ժահրը՝ ոսկերիչին, նշենիին:

Վերջին հարցադրում մը եւս. ինչո՞ւ ընտրել պսակ արմատը եւ ոչ՝ թագ, խոյր հոմանիշները: Ինչո՞ւ ըսել պսակածէ եւ չըսել թագածէ կամ խոյրածէ:

Թագը ընդհանրապէս ամանածէ կը հանգչի գլխուն վրայ եւ կ'ընդգրկէ անոր մէկ մասը, երբեմն միւսէն ականջները: Խոյրը այս նոյն յատկութեան վրայ կ'աւելցնէ իր երկարութիւնն ու բարձրութիւնը. յիշել Արտաշէս Ա-ի կամ Տիգրան մեծի, այլեւ մեր եպիսկոպոսներու կրած խոյրերը:

Պսակը, այս երկուքին հոմանիշ ըլլալով հանդերձ, անոնցմէ կը տարբերի իր ձեւով. ան գրեթէ տափարակ կը հանգչի գլխուն վերեւ, դափնեպսակի մը պէս եւ հագիւ կը ծածկէ ճակատին վերնամասը, այն նարտին պէս, որով պսակադիր քահանան կը զարդարէ ամուսնացող գոյգին գլուխները:

Արդ, ինտրոյ առարկայ ժահիրին պատկերը ամենէն աւելի կը նմանի այս վերջինին: Ստորեւ կը կցեմ գայն: Հրապարակ հանուեցան ուրիշներ ալ, որոնք հարազատին սքեմացած (schematise) տարբերակներն են պարզապէս:

¹ Այսօրուան տուեալներով ունինք թերթ, որ կը կիրարկէ երկու եզր, ունինք միւսէն երեք եզր կիրարկող լրագիր: Երբ հետաքրքրուեցանք՝ ըսուեցաւ. «Ի՞նչ վնաս ունի, մայրենիին համար հարստութիւն մըն է»:

Է՛հ, եթէ կ'ուզէք: Կը նմանի տան մէջ քանի մը հայր ունենալուն, որոնցմէ մէկը բնախօսական հայրն է, միւսը կամ միւսներն ալ... օժանդակ հայրերը, որոնք հանգիստ կը գոյակցին նոյն յարկին տակ: Հապա՞՞՞:

ԳՐԱԳԵՏ...

Սկիզբ՝ էջ 7

խումն անուններ. - Չօպանեանի «Հայրեններու Բուրաստան»ը, Լ. Բաշալեանի «Նորավայեր Ու Պատմութեան»ը, Արմենակ Սազըզեանի «Հայ Արուեստի Եջեր»ը (Ֆրանսերէն), հատոր մը՝ Երուսաղէմէն, չորս նոր հատորներ՝ Շաւարշ Նարդունիէն, վեպեր՝ Լեւոն Մեսրոպէն, Չարուհի Պահրիէն եւ Էլլեն Բիզանդէն, պատմութեան հատոր մը՝ Պետրոս Չարոյեանէն, երգիծագիր Նշան Պեշկաջեանէն «Լուլուտի»ն եւ «Հայ Աղբրտիք»ը, բանասեր Տիգրան Չիթունիի աւելի քան հազար էջանի «Սասունական»ը, Ղեւոնդ Մելիքեանի «Վասպուրականի Հերոսամարտը», եւ դեռ՝ Շաւարշ Միսաքեանի խմբագրութեամբ «Հայկաշէն» ու «Արածանի» պարբերագիրքերը (նկատի ունենալ որ

«Յառաջ» օրաթերթը դադրած էր գերմանական գրամանկապատմութեան ամբողջ տեղումը (թեմա), Հրանդ Բալուեանի խմբագրած «Չուրաթնոց» հանդէսն ստուար թիւ մը, ինչպէս նաեւ բանաստեղծական ու այլ բնոյթի մեծ ու փոքր գործեր:

Անտոնեան կը հաւաստիացնէ, որ լոյս ընծայուած այս գիրքերը ընդհանրապէս ունեցան լայն սպառում՝ փոխարինելով Ֆրանսահայ թերթերը, որոնք չիրատարակուեցան պատերազմի ընթացքին: Կարելի եղաւ մնայուն կապեր հաստատել Վիեննայի Միսիթարեան վանքին հետ ու հոնկէ եւս ներածել մեծաքանակ գիրքեր. մանաւանդ՝ «Ազգային Մատենադարան» շարքի պատմաբանասիրական հարիւրաւոր գիրքերէն «բազմաթիւ ամբողջական հաւաքածոներ բերուեցան Փարիզ ու սպառեցան օրը օրին»...:

(Շարունակելի - 1)

ԹԱՏԻՐՆԸ...

Սկիզբ՝ էջ 5

Նորդուելով դէպի այն ապագան որ կ'ընդգրկէ բոլորը՝ հաւատացեալն ու անհաւատը, դերասանն ու ծերունին՝ իր թռնակով:

Ահա թէ ինչո՞ւ ձեզի հետ կը բաժնեկցիմ Պուլլեի Շահին եւ սուֆիստական թատրոնի հետ մեր պատմութիւնը, որովհետեւ, բեմին վրայ ներկայացնելու ընթացքին, երբեմն կը տարուի մեր թատերական փիլիսոփայութեամբ եւ մեր դերով՝ իբր ընկերային փոփոխութիւններ ներմուծողներ, այն աստիճան, որ բազմութեան մեծ մասը կը մոռնանք: Այսօրուան մարտահրաւերներուն ընդառաջ, մենք զմեզ կը զրկենք թատրոնի հոգեւոր փորձառութենէ: Պոռնկութեան մէջ խրուած այսօրուան աշխարհին մէջ ատելութիւնն ու բռնութիւնները կ'աւելան, ազգեր ազգերու դէմ ելած են, հաւատացեալներ անհաւատներու դէմ կը պատերազմին, հաւաքականութիւններ ատելութիւն կը տածեն այլ հաւաքականութիւններու դէմ... Ընթացքին, երեսներ կը մեռնին թերի սննդառութենէ, մայրեր ծննդաբերութեան ընթացքին կը մեռնին բժշկական ինամքի պակասէ, իսկ ատելութեան գաղափարաբանութիւնը իր գագաթնակէտը կ'ապրի:

Մեր մոլորակը աւելի ու աւելի կը խրուի կլիմայական ու բնութեան ապականութեան մէջ եւ կարծեք Պատաստանի Օրուան չորս ձիւարներուն ձիերուն պայտերուն թոփիւնը հետզհետէ կը մօտենայ: Մենք պէտք է վերականգնենք մեր հոգեւոր ուժը, պէտք է պայքարինք անտարբերութեան, թուլամորթութեան, յոռետեսութեան, ազահութեան եւ մեր մոլորակը անտեսելուն դէմ: Թատրոնը ունի դեր մը, ազնիւ դեր մը, վերականգնողական ցնցելու ու շարժելու մարդկութիւնը անկումէն դէպի նոր բարձրութիւն: Ան կրնայ վերացնել բեմը, վերածելով սրբազան վայրի:

Հարաւային Ասիոյ մէջ, դերասանը բեմ չբարձրացած կը ծրի ու յարգանքով կը դափնայ անոր, հին աստուծոյն մը, որ հոգեւորն ու մշակութայինը իրարու կը կապէ: Ժամանակն է վերականգնելու արուեստագետին ու հանդիսատեսին, ներկային ու անցեալին միջեւ փոխադարձ կապը: Թատրոնը կրնայ ըլլալ սրբազան արուեստ մը, իսկ դերասանները կրնան իսկապէս ըլլալ իրենց ներկայացուցած դերերու վերամարմաւորումները՝ Աւայթայրները: Թատրոնը դերասանական արուեստը կը բարձրացնէ դէպի հոգեւոր բարձրութիւն: Թատրոնը կարողութիւնը ունի վերածուելու խորանի, իսկ խորանը՝ կատարողական արուեստի վայրի վերածելու:

ՄԱՐԴՈՒՆ ՄԵԿԸ



Քրիստ Կրոյեան

Հագաց... Արիւնը գլուխը խուժեց, մագերը տնկուեցան, ոտքերը թուլցան եւ լեզուն ծանրացաւ:

Վագեց դէպի բաղնիք, դուռը կղպեց, լոյսը վառեց ու կեցաւ հայելիին դիմաց:

Ուշադրութեամբ քննեց երեսը, երկու աչքերը, ափը դրաւ ճակտին երկու-երեք անգամ՝ տարբեր բաժիններ ձեռնելով:

Ծորակը բացաւ, ջուրը քիչ մը հոսելէն ետք ձեռքերը անոր տակ դրաւ ու լաւ մը օճառեց գանոնը: Մէկ-մէկ շփեց մատները, մատներուն արանքները եւ բթամատին ու ցուցամատին միջեւ գտնուող լայն փոսիկը: Դաստակին երեսով գոցեց ծորակը ու իր անձնական անձեռնոցով ցամքեցուց ձեռքերը: Արմուկով վար հրեց դուռին բռնակը ու ոտքով հրեց դուռը:

Դուրսը ընտանիքին յատկացուած ալքոլէն բաժին մը ձեռքերուն մէջ սրսկելով՝ հակասեխեց գանոնը: Մաքուր-կոկիկ նստաւ տեղը, սակայն միտքը կը մնար պղտորտարողնուած:

Թաշկինակ մը առաւ, «ալքոլէն», եւ լաւ մը սրբեց իր ձեռնահեռածայնը, ապա կրկին ձեռքերուն ալքոլ սրսկելով հակասեխեց գանոնը:

Անցեալին ձեռնահեռածայնը երբեմն իր մատնահետքը չէր ընդուներ, մատին վրայ հաւաքուած աղտին պատճառով: Այժմ ցուցամատի մէկ հպումով ձեռնահեռածայնը իր տրամադրութեան տակ կը դնէր բոլոր կարելիութիւնները:

Անգամ մը եւս բացաւ ոչ հեռու անցեալին ֆէյսպուքի էջերէն պահած այդ նկարը ու վերստուգեց ախ-

տանշանները: Ո՞րքանը ունէր անոնցմէ: Իսկ ունենալու պարագային, ախտանշանը արձանագրուած նոյն աստիճանով էր:

Անգամ մը եւս ձեռքը ճակտին



դրաւ: Այս անգամ մէկ տեղ միայն ու դարձեալ վար առաւ:

Սկսաւ շրջիլ ինսթակրամ-ֆէյսպուք-ուայթսափ օդակին մէջ: Փախուստ չկայ...

Ինչպէս աղօթքներուն վերջը «Ամէն» է, համացանցին վերնագիրն ալ այս օրերուն այդ բառն է: Այդ բառը, որ ստիպեց գինք այսքան բժախնդիր շարժիլ այս օրերուն: Այդ բառը, որ իր գրպանները պարպեց: Այդ բառը, որ ջլապինդ դարձուց գինք, աշխատանքները կասեցուց: Այդ բառը, որուն հետ ոչ մէկ բառ կրնար միջիլ այս օրերուն կրկնութեան յաճախականութեամբ: Բոլորին բերանն է, մեծին ու պոփիկին, ուսեալին ու թերուսին, հարուստին ու աղքատին:

Գլուխը սկսաւ ցաւիլ, կղպեց հեռածայնն ու մէկ կողմ նետեց:

Նորէն հագաց՝ Ըհը՝Ը՛հ, բայց այս անգամ անտարբեր մնաց, նոյն քայլերուն կրկնութիւնը զգուանք պատճառներ էր անոր:

Հագաց...

Հագաց սովորական հագ մը, ոչ սովորական պայմաններու մէջ:

Աշակերտական Անկիւն

ԱՆ



Աստղիկ Դանիէզեան

Հայ կինը գոհողութեան եւ սիրոյ իտեալ մարմնացումն է: Սերունդներու առաջին եւ իսկական դաստիարակը, արարող ու քաջ է: Ազգի համար կը պայքարի, ինչպէս Սօսէ մայրիկն էր:

Հայ կինը մայր է, որուն համար չկայ աւելի կարելի բան քան զաւկին դաստիարակութիւնը:

Պատմութեան ընթացքին ան տեսած է հալածանք ու տառապանք, բայց իր տոկոնութեամբ յաղթահարած է ամեն դժուարութիւն:

Ան իր նպաստը բերած է մեր գրականութեան: Անոնցմէ էին՝ Սրբուհի Տիւնաբ, Սիպիլ, Չապել Եսայեան...

Ան ամեն պարագաներու մէջ աշխատասեր է, պատուախնդիր ու ազգասեր: Հայու նկարագիրը կերտողնէ, որովհետեւ սերունդներու կրթողը ինքն է:

Անոր դերը շատ մեծ է մեր հանրային կեանքին մէջ: Ան բժշկուհի է, ուսուցչուհի, ճարտարապետ:

Ո՛չ մէկ դժուարութիւն կը ճանչնայ, ո՛չ մէկ պարտութիւն կ'ընդունի: Որովհետեւ ան համբերել է աշխատիլ գիտէ: Ու մանաւանդ միշտ կը ձգտի լաւագոյնին:

Ան միշտ ապացուցած է իր ուժն ու կամքը:

Եթէ հայ տղամարդուն դերը մեծ է հայրենիքի պաշտպանութեան մէջ, հայ կնոջ դերը անփոխարինելի է ազգի գոյատեւման պայքարին մէջ:

ԺԱ. Կարգ

Ընսասյի Ազգ. Ուսումնասիրաց Միացեալ Ծննդարան

ՀԱԼԷՊԻ «ՔՐԻՍՏԱՓՈՐ» ԳՐԱԴԱՐԱՆԻ 100-ԱՄԵԱԿԻՆ ԱՌԻԹՈՎ

Սեպուհ Արշակի Տանակեզեան

Սիրտս պարուրող այս հարիւրամեակը ետ կը տանի գիս յիսուն տարուան շրջան մը վերջիչելու:

1968-69-ին ամառնային երեկոյ մը առաջին անգամ ըլլալով մտայ «Քրիստափոր» գրադարան, հօրս՝ Արշակին ձեռքը բռնած, որ օրին գրադարանին դասաւորումը ստանձնած էր:

Դրան վերը ցուցատախտակին՝ գրադարան, ներսը պահարաններ

ունեցայ աշխատելու որպէս գրապահներէն մէկը, այս պաշտօնին անցնելով աստիճանաբար: Երկսեռ, երիտասարդ ընկերներ-ընկերուհիներու եռուգեմ մը կար հոն, բայց ես կրցայ սարդելով տեղ գտնել «Քրիստափոր» գրադարանի աշխատակազմին մէջ:

1989-ի Նոյեմբերին, 2-3 անձրեւոտ երեկոներու ընթացքին, տղոց օժանդակութեամբ գրադարանը



րուն ամիացուած խաւաքարտի շերտերուն վրայ իմաստուն խօսքեր, որոնցմէ կը յիշեմ «ծանիր գքեզ»ը, պատերուն՝ քանի մը նկար, անոնցմէ մէկը մեզի ծանօթ Սայեաթ Նոպան իր քամանչայով, պահարանները գիրք եւ սեղաններուն վրայ մեծ չափի տետրակներ՝ գիրքերու ցանկերն էին: Անոնց ետեւը երկու հոգի կ'ըլլար ընդհանրապէս, մէկը՝ սպասման վիճակի մէջ, միւսն ալ ընթերցողի մը հետ զբաղած: Այս ամէնուն հետ գիրքերուն հոտը ինծի անծանօթ կը թուէր տակաւին: Օրին հագիւ տասը տարեկան տղեկ մըն էի, Քրիստափոր Միքայելեան անունն իսկ տակաւին անծանօթ էր ինծի: Բայց յաջորդ տարիներուն պարգուեցաւ, որ գրադարան մտնելուս հետ «Քրիստափոր» գրադարանն ալ մէջս մտած է:

Քանի մը տարի փակ մնալէ ու փոշիներու տակ մոռցուելէ ետք, գրադարանը անգամ մը եւս յանձնուեցաւ հօրս՝ Զոկտեմբեր 1973-ին:

Որպէս պատանի, գրեթէ ամեն օր ակումբն էի, երբ վերաբացման կազմակերպչական աշխատանքները սկսան, ի միջի այլոց՝ նորագութիւն, գրքերու դասաւորում, ցանկագրում եւ այլն: Կը հետեւէի հօրս եւ արն. Խաչիկ Սարգիսեանին, ու երբ հայրս նոյնիսկ աննշան պարտականութիւն մը տար՝ արդէն առանձնաշնորհեալ կը համարէի ինքզինքս:

1978-ին, ճեմարանէն շրջանաւարտ ըլլալէս ետք միայն առիթը

փոխադրուեցաւ ԱՄՏ Տուն: Պարագաները փոխուած էին, գրադարանը այլեւս գործավար ունէր գրապահներու փոխարէն, ինքզինքս գտայ գրադարանի յանձնախումբին մէջ նախ որպէս անդամ եւ ապա որպէս պատասխանատու՝ 1990-էն մինչեւ 2001 կամ 2002, շարունակելով իւրաքանչիւր գիրքի հետ ապրում եւ իրականացուած ձեռնարկի հետ յաղթանակ տանողի զգացումով սնանկի: Նոյն ապրումները կ'ոգեւորեն գիս մինչեւ օրս:

100-ամեակի առիթով խոստովանեցայ իմ ոչ-ծածուկ սիրոյս մասին, որ «Քրիստափոր» գրադարանն է, աւելին՝ հպարտանործառայածմիւն:

Երկու տարիէ ի վեր ցաւով հեռացած եմ Հայկէսէն, սակայն բաժնուած չեմ զգար կեանքիս մէջ կարելոր տեղ գրաւած այս մասնիկէն:

«Քրիստափոր»ը, ուր նուիրումով աշխատանքը անսպասելի եղած է հոն, իր պատմական հանգամանքով արժանի է մեր սիրոյն եւ հոգատարութեան:

Սրտիս խօսքը տասնամեակներու վրայ տարածուած աշխատանքովս կրնամ մասամբ ըսուած համարել, շնորհակալ ըլլալով նաեւ որ այսօր առիթը ունեցայ արտայայտուելու անգամ մը եւս, բարի երթ մաղթելու մեր իրականութեան մէջ անզուգական «Քրիստափոր» գրադարանին: Աննկուն կամք ու յարատեւութիւն կը մաղթեմ անոր վարչական ընկերներուն եւ հովանաւոր մարմինին:

ԻՆՉ ԿՐՍԵՆ ԱՍՏՂԵՐԸ



ԽՈՅ

Շրջապատի մարդոց հարցերու լուծումը ձեզ մե շատ ժամանակ կը խլէ: Համբերատար եղէք:



ՑՈՒԼ

Այս շաբաթ գործ մի՛ ունենաք փաստաթուղթերու հետ եւ հաշուետուութիւններ մի՛ կատարէք:



ԵՐԿՈՒՐԵԱԿ

Կը փորձէք ընթանալ հոսանքին ուղղութեամբ, սակայն յիշեցէ՛ք, որ ան ձեզ կրնայ անսպասելի տեղեր հասցնել:



ԽԵՅՁԵՏԻՆ

Նպատակայարմար շաբաթ է տան գործերը դասաւորելու համար: Անոնք ճանճրոյթ չեն պատճառներ ձեզի այս շաբաթ, իսկ ընտանիքի անդամները սիրով կ'օգնեն:



ԱՌԻՉ

Բարեյաջող շաբաթ է անձնական յարաբերութիւններու վերաբերող հարցեր պարզաբանելու համար: Կրնաք լուծել ոչ միայն ձեր սիրային այլեւ ընտանեկան հարցերը:



ԿՈՅԱ

Այս շաբաթ գործի մէջ տհաճ կացութիւններ կրնան ստեղծուիլ: Շարք մը փոփոխութիւններ կատարելու անհրաժեշտութիւն պիտի գգաք:



ԿՇԻՈՔ

Նոր գործերու ձեռնարկեցէք միայն այն պարագային, երբ ունիք վստահելի աջակիցներ, որոնք բազմիցս սպասուցած են իրենց անկեղծութիւնն ու լրջութիւնը:



ԿԱՐԻՃ

Հաւանաբար այս շաբաթ հանդիպում ունենաք այնպիսի մարդոց հետ, որոնք ժամանակին նեղացուցած են ձեզ:



ԱՐԵՆԱՄՈՐ

Խուսափեցէք կիբական հարցերու ամռնուող արագ որոշումներ գոյացնելէ: Տնտեսական դժուարութիւններ կրնան յառաջանալ, տնտեսելու վարժութիւն ձեռք բերէք այս շրջանին:



ԱՅՑԵՂՋԻՐ

Վերջերս ձեզ անհանգստացնող հարցերը շատ արագ կը լուծուին: Թէեւ գործնական առումով այնքան ալ խոստմնալից շաբաթ չէ, այնուամենայնիւ ծրագիրներ մշակելու յարմարութիւն ունիք:



ՋՐՈՍ

Նոր ծանօթներու հետ ձեր յարաբերութիւնները զգուշութեամբ զարգացուցէք: Դուք հակում ունիք գերազնահատելու մարդիկը, վստահելու երբեմն անոնց, որոնք արժանի չեն այդ վերաբերմունքին:



ՋՈՒԿ

Հրաշալի շաբաթ է ընկերներու, համախոհներու հետ առցանց կապ հաստատելու եւ տարբեր հարցեր ընկարկելու համար:




ՊՍԱԿԱԶԵԻ ԺԱՅՐ-ՔՈՐՈՆԱ

Դեկտեմբեր 2019-ին չինական իշխանութիւնները աշխարհին տեղեկացուցին, որ ժահր մը կը տարածուի իրենց երկրի քաղաքներուն մէջ: Յաջորդող ամիսներուն ժահրը տարածուեցաւ այլ երկիրներ եւ վարակուածներուն թիւը կրկնապատկուեցաւ քանի մը օրերու ընթացքին: Այդ ժահրը շնչառական անակնկալ ախտ յառաջացնող պասակաձեւ (sarsCoV -2-) ժահրն է, որ կը պատճառէ covid-19 հիւանդութիւնը:

Ի՞նչ կը պատահի երբ անձ մը վարակուի եւ ի՞նչ պետք է ընել

Ժահրը պարզապէս կեղեւ մըն է ծիւղային նիւթի մը եւ կարգ մը սպիտէրու (proteins) շուրջ, հաւանաբար ոչ իսկ ապրող բան մը, որ կրնայ բազմապատկուիլ միայն ապրող քիչի մը մէջ մտնելով: Պսակաձեւ ժահրը կրնայ փոխանցուիլ մաշկէրէսներու ճամբով, բայց տակաւին յստակ չէ, թէ որքան ժամանակ կրնայ ապրիլ անոնց վրայ: Ժահրը հիմնականօրէն կը փոխանցուի օդակաթիլներու ճամբով, երբ անձ մը հազայ կամ դաչի վարակուած ան-



ձի մը, ապա դաչի իր երեսին, շփելով աչքերը կամ քիթը: Ժահրը կը սկսի այն տեղէն, ապա գաղտնի ձեւով կ'իջնէ մարմինին խորքը: Ան կ'ուղղուի դէպի աղիքներ, փայծաղ կամ թոքեր, ուր կրնայ ունենալ ամենավնասակար ազդեցութիւնը:

Թոքերը պատուած են միլիոնաւոր մառային քիչիւններով (epithelial cells): Անոնք մարմինին այն քիչիւնն են, որոնք կը պատեն ձեր գործարանները եւ խլիւթաթաղանթը (mucosa) եւ կը սպասեն վարակման: Պսակաձեւ ժահրը կը կապուի իր գոհին մաշկերուն վրայ գտնուող յատուկ ընկալուիչներու, ներարկելու ծիւղային նիւթը: Բջիջը, որ չի գիտեր թէ ի՞նչ կը պատահի, կ'արձակէ նոր հրահանգներ, որոնք շատ պարզ են՝ ընթրիանակել եւ վերահաւաքել: Բջիջը կը սկսի լեցուիլ բուն ժահրին օրինակներով, մինչեւ որ հասնի վտանգաւոր կէտի մը եւ ստանայ վերջին հրահանգ՝ ինքնադէտէկցում: Այնուհետեւ քիչիւնը կը ցնդի՝ արձակելով պսակաձեւ ժահրի նոր մասնիկներ, որոնք պատրաստ են յարձակելու այլ քիչիւններու վրայ: Վարակուած քիչիւններուն քանակը արագօրէն կ'աճի, մօտաւորապէս տասը օր ետք մարմինի միլիոնաւոր քիչիւններ կը վարակուին եւ միլիաւոր ժահրեր կը լեցուին թոքերուն մէջ: Ժահրը տակաւին շատ վնաս չէ պատճառած, բայց ան այդուհետեւ ձեր իսկական թշնամի է, կը յարձակի ձեր դիմադրողական համակարգին վրայ: Ձեր դիմադրողական համակարգը, որ մինչ այդ կը պաշտպանէր ձեզ, այս պարագային կրնայ բաւական մեծ վտանգ հանդիսանալ ձեզի համար, եւ պետք է խստիւ կարգաւորուի: Մինչ առողջ քիչիւնները կը լեցուին թոքերուն մէջ պայքարելու ժահրին դէմ, ժահրը կը վարակէ գիրենք եւ շփոթ մը կը ստեղծէ: Բջիջները կը հաղորդակցին փոքր տեղեկատուական սպիտէրու ճամբով, որոնք կը կոչուին *սայթոքային*: Գրեթէ իւրաքանչիւր կարեւոր դիմադրողական արձագանգ կը վերահսկուի անոնց կողմէ: Պսակաձեւ ժահրը պատճառ կը դառնայ, որ վարակուած քիչիւնները բուն ձեւով արձագանգ են եւ կատողին, ասիկա դիմադրողական համակարգը կատարութեան մէջ կը ձգէ եւ կ'ուղարկէ արեւի շատ գիտնորներ, վատնելով իր աղբիւրները եւ վնաս պատճառելով մարմինին: Յատկապէս երկու քիչիւն շատ մեծ վնաս կը պատճառեն. առաջինը՝ *Նիւթրոֆայլներ* (neutrophils), որոնք վար-

պետ սպանողներ են: Անոնք երբ հազարներու կը հասնին, կը սկսին արձակել էնզայմներ, որոնք կ'ուղեւորեն նոյն չափով ընկերներ եւ թշնամիներ: Երկրորդ կարեւոր քիչիւնը, որոնք կը կատողին, սպանող T քիչիւնն են՝ որոնք ընդհանրապէս վարակուած քիչիւններուն կը հրահանգեն վերահսկուած անձնասպանութիւն կատարել: Անոնք շփոթի մատուցելով կը սկսին առողջ քիչիւններուն ալ հրահանգել անձնասպան ըլլալ, երբ վարակամետ յաւելեալ քիչիւններ կու գան, յաւելեալ վնաս կը պատճառեն եւ կը սպաննեն թոքերուն առողջ հիւսուածքը: Այս գործընթացը կրնայ այդքան գէշ ըլլալ, որ անդամաւոր վնաս եւ ցմահ հաշմանդամութիւն կրնայ պատճառել: Շատ մը պարագայներու դիմադրողական համակարգը կը վերականգնէ իր հսկողութիւնը, կը սպանէ վարակուած քիչիւնները, կ'արգիլէ ժահրերը նոր քիչիւններ վարակելու եւ կը մաքրէ ռազմադաշտը:

Ապաքինումը կը սկսի, պսակաձեւ ժահրով վարակուածներուն մեծ մասը կ'ունենան մեղմ ախտանշաններ, բայց այլ պարագայներ կ'ըլլան ծանր կամ նոյնիսկ լուրջ, տոկոսը չենք գիտեր, քանի որ բոլոր պարագայները յայտնաբերուած չեն, բայց կրնանք ըսել որ այս ժահրով վարակուած մտահոգիչ պարագայներու թիւը արեւի է քան կրիփով վարակուածներունը: Աւելի ծանր պարագայներուն միլիոնաւոր մառային քիչիւններ կը մեռնին եւ անոնց հետ կ'անհետանայ թոքերուն պաշտպանիչ երեսը, ատիկա կը նշանակէ որ թոքախորշիկները, փոքրիկ օդային տոպրակները, որոնց միջոցաւ շնչառութիւնը տեղի կ'ունենայ, կրնան վարակուիլ մակրէներով, որոնք ընդհանրապէս վնասակար չեն: Հիւանդը թոքատապ կ'ունենայ, շնչառութիւնը դժուար կը դառնայ կամ անկարելի եւ ան արհեստական շնչառութեան գործիքի կարիք կ'ունենայ գոյատեւելու համար: Դիմադրողական համակարգը շաբաթներով պայքարած էր իր ամբողջ կարողութեան գէնքեր, մինչ հազարաւոր մակրէներ արագօրէն կը բազմապատկուին ան ճնշուած կը գգայ, անոնք կը մտնեն արեան մէջ եւ կը տարածուին մարմինին մէջ, այս պարագային մահը շատ հաւանական է:

Պսակաձեւ ժահրը ընդհանրապէս կը բաղդատուի կրիփին հետ, բայց իրականութեան մէջ շատ արեւի վտանգաւոր է, մինչ դժուար է ճշդել մահացողներուն թիւը համաճարակի տարածման ընթացքին, վստահ ենք որ ատիկա շատ արեւի վարակիչ է եւ շատ արեւի արագ կը տարածուի քան կրիփը:

Ո՞ր կը կայանայ վտանգը

Արագ համաճարակի ընթացքին բազմաթիւ մարդիկ հիւանդ կ'ըլլան նոյն ատեն: Եթէ թիւերը շատ բարձրանան, առողջապահական համակարգերը չեն կրնար լուծել հարցը, բոլորին համար չեն ընծայուիր բուժումի բաւարար միջոցներ, ինչպէս բժշկական անձնակազմ կամ կազմածներ, օրինակ՝ արհեստական շնչառութեան գործիքներ: Մարդիկ առանց բուժումելու կը մահանան, առողջապահական համակարգի աշխատողները իրենք եւս կրնան հիւանդանալ, հետեւաբար առողջապահական համակարգին կարողութիւնը արեւի կը նուազի: Եթէ ասիկա ըլլայ պարագան, պետք է առնուի սարսափելի որոշումներ, թէ ով պիտի ապրի եւ ով՝ ոչ: Մահա-

Մարզական



Ռաֆֆի Սիկահեան

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ

ԻՊՐԱՅԻՍՏՈՎԻԶ ՊԻՏԻ ԵԱՐՈՒՆԱԿԷ ԻՐ ՄԱՐԶԱԿԱՆ ԿԵԱՆՔԸ ՈՐՊԵՍ ՄԱՐԶԻԶ

Իտալական La Gazzetta dello Sport-ը հաղորդեց, որ 38-ամեայ շուէտացի խաղացող Զլաթան Իպրահիմովիչ Իտալիոյ Միլանին հետ մէկ տարուան պայմանագրութիւն կնքած էր, որ պիտի աւարտի Յունիսին: Զլաթան Միլանին հետ մաս կազմած է տասը հանդիպումներու եւ նշանակած՝ չորս կոլ: Ըստ աղբիւրին, ան իր մարզական կեանքը պիտի շարունակէ որպէս մարզիչ, որովհետեւ մտադիր չէ երկարաձգելու իր պայմանագիրը: Աւելցնենք, որ Զլաթան Իպրահիմովիչ իր տարիներու խաղարկութեան ընթացքին ձեռք բերած է Նիտրոլանտի, Իտալիոյ, Սպանիոյ եւ Ֆրանսայի ախոյեանութիւնները: Շուէտի հաւաքականին հետ մաս կազմած է 116 մրցումի՝ նշանակելով 62 կոլ:



ՊՈՒՓՕՆ ՊԻՏԻ ԵՐԿՎՐԱԶԳԷ ԻՐ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒԹԻՒՆԸ

Իտալիոյ բազմակի ախոյեան Իվվենթուսը առաջարկած է իր դարպասապահին՝ Պուֆոնին, մէկ տարիով երկարաձգել պայմանագիրը՝ մինչեւ 2020-2021 տարեշրջանի աւարտը: Ըստ Corriere di Torino-ի, խումբին մէջ կան երեք ֆուլթայլիստներ, որոնք պայմանագրութիւնները խումբին հետ կ'աւարտին այս տարուան Յունիսին:



Ուստի ակումբի ղեկավարները առաջարկած են անոնց պայմանագրութիւնները երկարաձգել մէկ տարիով: Յիշենք, որ Կելինիին, որ Իվվենթուսի երիցագոյնն է, այս տարի երկար ժամանակաշրջան մը չկրցաւ մաս կազմել մրցումներուն ծանրօրէն վիրաւորուած ըլլալուն համար, իսկ դարպասապահի Պուֆօնը ներկայ եղաւ 11 մրցումի, մինչդէռ Մատիուիթին Իվվենթուսի կազմին հետ մասնակցեցաւ 24 մրցումի:

ԱՐՍԵՆԱԼ ՈՐՈՇԵՑ ՄԵԻՔԱՐԵԱՆԻ ՓՈՒԱՐԻՆՄԱՆ ԳՈՒՄԱՐԸ

Horriere Dello Sport-ը գրեց, որ ամրան փոխադրաշրջանին, Զայաստանի հաւաքականի յարձակողական խաղացող Զենիկ Միխիթարեան, որ մէկ տարուան վարձավճարով միացած է Իտալիոյ Ռոմային, կրնայ մնալ իտալական խումբին հետ փոխան 25 միլիոն եւրոյի: Անգլիոյ Արսենալի խաղացողը, որ այս տարի միացաւ Ռոմային, խումբին հետ մաս կազմեց ութը մրցումներու, նշանակեց վեց կոլ ապա նաեւ դարձաւ երեք կոլի հեղինակ:



ՓԱՈՒԼՈ ՄԱՆՏԻՆԻՆ ԵՒ ՈՐԴԻՆ ՊՍԱԿԱԶԵՒ ԺԱՅՐՈՎ ՎԱՐԱԿՈՒԵՑԱՆ

Իտալիոյ Միլան ակումբի վարչակազմը պաշտօնական կայքէջին միջոցով յայտարարեց, որ խումբի երկարամեայ նախկին խաղացող Փաուլօ Մալտինին եւ իր որդին, որ այժմ Միլանի խաղացող է, վարակուած են պսակածեւ ժահրով: Աղբիւրը յիշեց, որ Փաուլօ Մալտինին վերջերս հանդիպած է պսակածեւ ժահրի հիւանդութենէն տառապող անծի մը եւ անկէ վարակուած է, մինչդէռ մանչը, որ մաս կը կազմէ Միլանի երիտասարդական խումբին, ժահրը ստացած է իր հօրմէն: Ներկայիս մալտինիները հիւանդանոցի մէջ յատուկ հոգատարութեան կ'արժանանան: Անոնց վիճակը մտահոգիչ չէ:



ԼԵՅՔԸՐԶԻ ԿԱԶՄԵՆ ԵՐԿՈՒ ԽԱՂԱՑՈՂՆԵՐ ՎԱՐԱԿՈՒԵՑԱՆ ՊՍԱԿԱԶԵՒ ԺԱՅՐՈՎ

Ամերիկայի Լոս Անճելոս Լեյքըրզի ակումբը պաշտօնական կայքէջին միջոցով յայտարարեց, որ խումբէն երկու խաղացողներ վարակուած են պսակածեւ ժահրով եւ ներկայիս մեկուսացուած են սենեակի մը մէջ, յատուկ հոգատարութեան ներքոյ: Ռոյթըրդ լրատուամիջոցը յայտնեց, որ կազմի բոլոր խաղացողները հիւանդանոցին մէջ ենթարկուեցան ժահրի յատուկ քննութեան, որուն հետեւանքով ի յայտ եկաւ, որ երկու խաղացողներ կը տառապին պսակածեւ ժահրի հիւանդութենէն, առանց յիշելու անոնց անունները: Աւելցնենք, որ երկու օր առաջ Պրոքլին Նեթս ակումբը յայտարարեց, որ չորս խաղացողներ կը տառապին սոյն հիւանդութենէն:



Օճառը կը փճացնէ այդ ճարպը եւ թոյլ չի տար որ վարակուէր: Օճառը ձեր ձեռքը սահուն կը դարձնէ եւ լուացուելու մեքենական շարժումներուն ճամբով ժահրերը կը ջքանան:

ՊՍԱԿԱԶԵՒ...

Սկիզբ՝ էջ 10


ցողներուն թիւը զգալիօրէն կը բարձրանայ այս պարագային, ասկէ խուսափելու համար աշխարհը, այսինքն՝ մենք, պետք է ընենք այն ինչ որ համաճարակը դանդաղեցնէ: Զամաճարակը կրնայ դանդաղիլ անոր ճիշդ արձագանգներով, յատկապէս նախնական շրջանին, որպէսզի բոլոր հիւանդները բուժուին ստանան եւ հիւանդանոցներուն վրայ շատ ճշում բնակեցուի: Եւ քանի որ պատուաստ չկայ պսակածեւ ժահրին դէմ, պետք է մենք մեր ընթացքը փոխենք, վարուելով իբրեւ ընկերային պատուաստ, ասիկա պարզապէս կը նշանակէ երկու բան.

- 1.- Զվարակուիլ
- 2.- Զվարակել ուրիշները:

Լաւագոյն միջոցը ձեռքերը լուալն է, օճառը իրականութեան մէջ հզօր գործիչ է, պսակածեւ ժահրը կը գտնուի ճարպի շերտի մը մէջ:

Յաջորդ քայլը ընկերային հեռաւորութիւնն է, որ հաճելի փորձառութիւն մը չէ, բայց ճիշդ միջոց մըն է, ատիկա կը նշանակէ չփաթուիլ, ձեռք չսեղմել, եթէ կրնաք տունը մնալ, մնացեք տունը, որպէսզի պաշտպանեք անոնց, որոնք պետք է տունէն դուրս ելլեն աշխատելու ձեռքի համար՝ բժիշկներ, գանձապահներ, ոստիկաններ, լրագրողներ:

Աւելի լայն մակարդակի վրայ կան ինքնամեկուսացումի միջոցներ, ինչպէս ճամբորդութեան արգելքներ, կամ գործնական հրահանգներ տունը մնալու: Ինքնամեկուսացումը հաճելի փորձառութիւն մը չէ եւ անշուշտ դժուար ընդունելի է մեզի եւ յատկապէս դեղեր եւ պատուաստներ պրոպոզիւցները խուճապի չմատնուի:



Պսակաճեւ ժահրին տարածումը կանխարգիլելու համար, Սուրիոյ կառավարութիւնը 14 Մարտին որոշեց փակ յայտարարել բոլոր վարժարաններն ու մշակութային, ընկերային վայրերը, իսկ 24 Մարտին՝ բոլոր գործատեղիներն ու վաճառատուները, բացի դեղարաններէն, սննդամթերքի վաճառատուներէն եւ հիւանդանոցներէն:



Բալէպ



Դամասկոս



Տարաս

ՄԵՐ ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐՈՒ ՌԷՇԱԴՐՈՒԹԵԱՆ

Պսակաճեւ ժահրէն նախագգուշացման շրջագիծէն ներս, Սուրիոյ Տեղեկատուութեան Նախարարութիւնը որոշեց դադրեցնել տպագիր մամուլը՝ ցնոր տնօրինում: Առ այդ Մեր ընթերցողներու ուշադրութեան կը յանձնենք, որ «Գանձասար» Մարտ Դ. թիւէն սկսեալ լոյս պիտի տեսնէ միայն առ ցանց դրութեամբ՝ ցնոր տնօրինում, մեր պաշտօնական կայքէջին (www.kantsasar.com) եւ դիմատետրի էջին վրայ: Կրնաք նաեւ ներբեռնել թերթին PDF տարբերակը՝ կայքէջ այցելելով:

Ստանալու համար թերթին PDF տարբերակը կրնաք նաեւձեր Ե-Նամակի հասցէն որկել մեր հասցէին՝ kantsasarweekly@hotmail.com:

«Գանձասար»ի Խմբագրութիւն